AZG NEW PDF.qxd 01/07/2010 22:55 Page 1


# Ազգ
Azg

2 ՅՈՒԼԻՍ 2010 ՈՒՐԲԱԹ 122 (4502)

ISSN: 1829-1651


## Համաժողով՝ մշակելու Ցեղասպանության միջազգային ճանաչման հայեցակարգ

Այսօր Երեւանում տեղի է ունենալու «Մեծ եղեռնի-Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելից. Արդարության հաստատման սահմանագիծ» մեկօրյա համաժողովը, որը կազմակերպել են Համաշխարհային հայկական կոնգրեսը, ՀՀ սփյուռքի նախարարությունը եւ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան:

Համաժողովում քննարկվելու են հետեւյալ հարցերը.

1. մինչեւ 2015թ.՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը, համահայկական միասնական գործողությունների հայեցակարգային ծրագիր ունենալու անհրաժեշտությունը, որը կուղղորդի համայն հայության ջանքերը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դատապարտման, դրա հետեւանքների հաղթահարմանն ուղղված գործողություններում,

2. ցեղասպանության դատապարտման եւ դրա հետեւանքների հաղթահարման նպատակով մեր կողմից միջազգային դատական ատյաններ դիմելու հնարավորությունը,

3. վերոնշյալ ծրագիրը մշակելու, համակարգելու եւ իրագործումն ապահովելու նպատակով միջազգային դատական ատյաններ դիմելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթի մշակման նպատակով փորձագիտական, մասնագիտական հանձնաժողովներ ձեւավորելու անհրաժեշտությունը:

Հ. Ա.

## Տիգրան Սարգսյան. ԼՂՀ ժողովրդի կարծիքը լինելու է կողմնորոշիչ, եւ դրա հիման վրա են տրվելու լուծումները

*«Օրեր» ամսագրի գլխավոր խմբագիր Հակոբ Ասատրյանի հարցերին պատասխանում է Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը*

**- Սկսենք տնտեսական ճգնաժամի հաղթահարման խնդրից: Ձեր վերջին ելույթներից մեկում նշեցիք, որ Հայաստանն արդեն հաղթահարման պրոցեսում է, եւ նույնիսկ գրանցվել է 5,5% տնտեսական աճ: Ինչպե՞ս է դա երեւում հասարակ ժողովրդից: Մի բան են թվերը եւ մի բան՝ մարդկանց կյանքը: Դուք ի՞նչ կերպ եք բացատրում այդ հաղթահարումը:**

- Ուզում եմ համաձայնել, որ չափազանց կարեւոր է, թե ինչպես է սովորական քաղաքացին զգացել 2009 թվականի տնտեսական ճգնաժամի բացասական հետեւանքների ազդեցությունը: Չնայած 2009 թվականին ունեցանք համախառն ներքին արդյունքի անկման բավականին մեծ ցուցանիշ՝ շուրջ 14%, մենք փորձեցինք այնպիսի հակաճգնաժամային ծրագիր իրականացնել, որը պետք է մեղմեր մեր քաղաքացիների բոլոր սոցիալական խնդիրները:



Սոցիալական ծրագրերի իրականացմամբ ունեցանք կենսաթոշակների շուրջ 16% ավելացում, ինչպես նաեւ սոցիալական նպաստների ավելացում, մի բան որ նույնիսկ զարգացած երկրներն իրենց չկարողացան թույլ տալ: Ավելացրեցինք նաեւ այն միանվագ վճարները, որ իրականացնում էինք առաջին եւ երկրորդ երեխայի, երրորդ եւ ավելի երեխայի ծննդյան կապակցությամբ: Էապես բարձրացրինք այդ ծավալները: Նաեւ բյուջետային հիմնարկների աշխատողների աշխատավարձերն աճեցին շուրջ 10%-ով, իսկ մասնավոր ոլորտում՝ շուրջ 11%-ով: Դա հնարավոր եղավ իրականացնել՝ էապես ավելացնելով պետության արտաքին եւ ներքին պարտքը: Մենք ունեցանք աննախադեպ բարձր դեֆիցիտ՝ շուրջ 7,7% ՀՆԱ-ի մեջ: Հիմնականում միջոցներ ներգրավեցինք Համաշխարհային բանկից, Միջազգային արժութային հիմնադրամից, Ասիական բանկից, ինչպես նաեւ Եվրոմիության գրանտներն ու վարկերը հնարավորություն տվեցին մեր բյուջետային ծախսերը 2008 թվի համեմատ 2009-ին ավելացնել 14%-ով:

Տես էջ 4

**ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ԳԵՆԵՐԱԼԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ**

## Կոմանդոս. «Հայկական զորքի դուրսբերումը ազատագրված տարածքից նշանակում է Հայաստանի կործանում»



ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հունիսի 18-ին Չայլու գյուղում կատարված ողբերգության մեջ գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադեւոսյանն առաջին հերթին մեղադրում է հայկական կողմին: Սահմանում եղել են անփորձ զինվորներ, հետեւաբար սպաները պետք է ավելի աչալուրջ լինեին ու չկորցնեին զգոնությունը:

«5 հոգու կորուստը հրամանատարության մեղքն է: Կատարվածն անուշադրության հետեւանք է: Սահմանին պետք է լինեին պատասխանատուներ: Այժմ դեպքի վայրում աշխատում է հատուկ խումբ, որը կբացահայտի կատարվածն, ու մեղավորները կպատժվեն: Սա պետք է դաս լինի հայկական կողմի համար, որ այսօրինակ դեպքերը չկրկնվեն: Խորհուրդ կտայի, որ հայկական կողմը պատասխան հարված տար ադրբեջանցիներին», ասաց նա՝ հավելելով, որ Չայլու գյուղում զինվորների պահվածքը չի արտացոլում հայկական բանակի պատկերը:

Նա նշում է, որ հայկական կողմը երբեւէ սադրանքի չի դիմում, ի տարբերություն Ադրբեջանի: Կոմանդոսը համոզված է. դա հատուկ է արվում, որպեսզի իրենց համոզեն, որ ադրբեջանական բանակն ուժեղ է, եւ նրանք պատրաստ են պատերազմի՝ այդ կերպ թաքցնելով իրենց թույլ կողմերը:

Տես էջ 2

## Մերկելի թեկնածու Վուլֆը՝ Գերմանիայի նոր նախագահ

Գերմանիայի նախագահի պաշտոնում երեկ ընտրվեց կանցլեր Անգելա Մերկելի գլխավորած քաղաքական կոալիցիայի մեջ մտնող «Քրիստոնեա-դեմոկրատական միության» անդամ, 51-ամյա Քրիստիան Վուլֆը: Վուլֆը մինչ այդ զբաղեցնում էր գերմանական Ներքին Սաքսոնիայի վարչապետի պաշտոնը:

## Հարավային Կովկասը՝ Քլինթոն-ԵԱՀԿ ՄԽ փոխատեղումներով

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները տարածաշրջան կատարելիք այցի շրջանակներում Երեւանում հանդիպումներ կունենան շաբաթ օրը՝ հուլիսի 3-ին: Ըստ աշխատանքային օրակարգի համաձայն, համանախագահները Երեւանում կհանդիպեն Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ:**

**Նախապես հայտարարվում էր, թե ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները Երեւանում են լինելու հուլիսի 4-ին, սակայն, ԱԳՆ-ի հաղորդմամբ, նրանք հանդիպումներ կանցկացնեն հուլիսի 3-ին:**

**Միեւնույն ժամանակ, ըստ ԼՂՀ նախագահի հասարակայնության հետ գլխավոր վարչության պետ Դավիթ Բաբայանի, համանախագահները, նախքան Երեւանյան հանդիպումները այսօր՝ օրվա առաջին կեսին կհանդիպեն Բակո Սահակյանին Ստեփանակերտում: Իսկ ադրբեջանական լրատվամիջոցները տեղեկացնում են, թե համանախագահները Բաքու են ժամանելու երկուշաբթի՝ հուլիսի 5-ին: Ստացվում է, որ հուլիսի 4-ը մնում է համանախագահների տրամադրության տակ, եւ այդ օրվա նրանց օրակարգը հայտնի չէ:**

**Ինչ վերաբերում է Մինսկի խմբի համանախագահների այցելությունների նպատակին, ապա այդ առնչությամբ «Ազգն» արդեն տեղեկացրել է, որ այս այցելությունն, ամենայն հավանականությամբ, անհրաժեշտ է կազմակերպչական ավարտին հասցնելու Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների հավանական հանդիպումը Ղազախստանում հուլիսի 16-17-ին կայանալիք ԵԱՀԿ ԱԳ նախարարների ոչ ֆորմալ հանդիպման ընթացքում:**

**Այդ հանդիպման հավանականությունը երեկ Բաքվից չեն հաստատել, թեեւ չեն էլ հերքել: Մասնավորապես, ըստ ադրբեջանական կայքէջերի, Ադրբեջանի ԱԳՆ-ից տեղեկացրել են, որ արտգործնախարար Էլմար Մամեդյարովը մասնակցելու է հուլիսի 16-17-ին Ղազախստանում անցկացվելիք ԵԱՀԿ ԱԳ նախարարների ոչ ֆորմալ հանդիպմանը: Սակայն կհանդիպե՞ն արդյոք Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գերատեսչությունների ղեկավարները, Ադրբեջանի ԱԳՆ-ից ներկայացրե՞լ են, թե նման հանդիպում դեռեւս ծրագրված չէ:**

Տես էջ 2

## Վաղվա «Ազգ. Պատմա-բանասիրական» հավելվածում

**Բանասիրական գիտությունների դոկտոր Ալբերտ Մուշեղյանի «Ընդդեմ հակահայկական հայագիտության» ծավալուն հոդվածը՝ հայագիտության՝ վաղուց արդեն վիճահարույց հարցերի շուրջ՝ ակադեմիկոս Համլետ Գեւորգյանի «Հայաստանը եւ Եվրոպան» հոդվածի առիթով:**

**Արեւելագետ, Իտալիայում եւ Վատիկանում ՀՀ դեսպան Ռուբեն Կարապետյանի «Սիրիայի տեղն ու դերը արաբ-իսրայելական հակամարտությունում (1946-2000 թթ.)» աշխատության՝ Գեւորգ Յազըճյանի գրախոսականը:**

**«Մոռացված անուններ» շարքից՝ Ռաֆայել Խալաթյանը ներկայացնում է XIX դարի առաջին կեսերին գործած, ժամանակի հայ իրականության ամենազարգացած ու բեղուն մտավորականներից՝ հրապարակախոս, բանաստեղծ, մանկավարժ, թարգմանիչ, կրոնական գործիչ Հովհաննես Տերոյենցին:**

**«Սողոմոն Թեհլիրեանի դատավարութիւնը եւ հոգեբանական հարցերը»՝ Նյու Յորքից Արմինե Մինասյանի հրապարակումը:**

Մ. Բ.

## Գրողների համաժողովը նոր հեռանկարներ է բացում

*Արա Աբրահամյանը նպաստում է դրանց իրականացմանը*

Գրողների համահայկական համաժողովը նախորդ օրը իր աշխատանքները շարունակեց Շիրակի մարզում: Մարզպետարանում պատվիրակությանը ընդունեց եւ նրանց հետաքրքրող հարցերին պատասխանեց փոխմարզպետ պրն **Սեյրան Պետրոսյանը**: ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը ներկայացրեց հյուրերին ու խոսեց արդի գրականության խնդիրների մասին: Գրողները այցելեցին Ավ. Իսահակյանի, Հովհաննես Շիրազի տուն-թանգարաններ, որից հետո Գյումրիի գեղարվեստի ակադեմիայի մեծ դահլիճում համաժողովի շրջանակներում մասնակցեցին մեծանուն գրող Հովհ. Շիրազի ծննդյան 95-ամյակին նվիրված հոբելյան-երեկոյին: Գրողներին ողջունեցին եւ համագումարին բեղմնավոր աշխատանք մաղթեցին ՀՀ մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանը**, Գյումրիի քաղաքապետ **Վարդան Ղուկասյանը**: Լեւոն Անանյանը մեծ գրողի



կյանքն ու բեղուն ստեղծագործական ժառանգությունը ներկայացնելու համար խոսքը փոխանցեց բանախոս, բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր **Սամվել Մուրադյանին**: Այնուհետեւ հնչեցին Շիրազի ստեղծագործություններն ու դրանց տեքստերի վրա գրված երգերը, որոնց կատարողներին միացավ դահլիճը եւ երգն ու պարը համախմբեց բոլորին, ու տոնական տրամադրությունը շարունակվեց մինչեւ ուշ երեկո:

Հաջորդ օրը, արդեն Ծաղկաձորի գրողների տանը տեղի ունեցավ բանաստեղծուհի Նաթելլա Լալաբեկյանի (ԱՄՆ) «Բազմակետ» ժողովածուի շնորհանդեսը: Բանաստեղծուհու գրական ժառանգությունը ներկայացրեցին Լեւոն Անանյանը եւ Արտեմ Հարությունյանը: Նաթելլան ծնվել է Երեւանում, սակայն 3 տարեկանում տեղափոխվել է Մոսկվա, հետո՝ Լոս Անջելես: Նրա պոետական ներաշխարհը դժվար է ներկայացնել առանց հայրենիքից ստացած լիցքերի: Գիրքը ռուսերենից թարգմանել է Կարինե Աշուղյանը:

Այնուհետեւ համաժողովի աշխատանքներին միացան Համաշխարհային հայկական կոնգրեսի եւ Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը, ՌՀՄ առաջին փոխնախագահ Վլադիմիր Աղայանը:

Տես էջ 6

# Ուղղափառության վեհաժողովի քարտուղար. «Մենք ձեր կողքին ենք…»

Երեկ նախագահ Սարգսյանը հանդիպել է Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովի 17-րդ նիստի մասնակիցների հետ: Խորհրդանշանական համարելով քրիստոնեության եւ քաղաքակրթության հնագույն օրրաններից մեկում վեհաժողովի ամենամյա նիստի գումարումը, նախագահը խոսել է Հայոց եկեղեցու՝ հայերիս կյանքում դարերով կատարած արժեպահպան դերի մասին, իսկ վեհաժողովի ընդունած «Տարածաշրջանում քրիստոնեական հոգեւոր եւ մշակութային հուշարձանների պահպանման եւ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման բանաձեւին» անդրադառնալով՝ նախագահը նշել է. «Կարծում եմ՝ ձեր ընդունած բանաձեւը մեծապես արժեւորվում է՝ այս բարդ ու կոնֆլիկտային տարածաշրջանում հակամարտությունների կարգավորման, խաղաղության, փոխվստահության եւ կայունության մթնոլորտի ձեւավորման տեսանկյունից»:

Նախագահը բարձր է գնահատել Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովի նպատակները՝ ծայրահեղ ազգայնամոլության եւ կրոնական անհանդուրժողականության հաղթահարման, մարդու իրավունքների, ազգային եւ կրոնական փոքրամասնությունների պաշտպանության գործում:

Նախագահը նաեւ ողջունել է Լեռնային Ղարաբաղ այցելելու վեհաժողովի մասնակիցների որոշումը, որոնք ուզում են տեղում ծանոթանալ դարեր շարունակ իր բնօրրանում ապրող ու արարող քրիստոնյա ժողովրդի կյանքին, խաղաղության պայմաններում սեփական որոշմամբ ապագան կառուցելու ցանկությանն ու կամքին: Վեհաժողովի նախագահ, ՌԴ պատգամավոր **Սերգեյ Պոպովը** գոհունակությամբ է խոսել վեհաժողովի աշխատանքի մասին՝ վստահություն հայտնելով, որ քննարկումներն այսուհետեւ կտեղափոխվեն կազմակերպության անդամ երկրների խորհրդարաններ, իսկ ընդունված փաստաթղթի բովանդակությունն, ըստ նրա, պետությունների ղեկավարներին եւ միջազգային կազմակերպություններին խորհելու տեղիք կտա:

Ըստ Հայաստանի նախագահի մամուլի ծառայության հաղորդագրության՝ հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել ԼՂ հակամարտության եւ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի ներկա պահին, առկա խնդիրներին, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների նախագահների վերջին հայտարարությանը, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին:

Ըստ վեհաժողովի մասնակիցների՝ Հայաստանում վեհաժողովի անցկացումը պայմանավորված է եղել տարածաշրջանային մտահոգություններով եւ իրավիճակով. «Մենք ձեր կողքին ենք, եւ արդարությունը ձեր կողմն է: Այն ի վերջո կհաղթանակի», ասել է վեհաժողովի գլխավոր քարտուղար, Հունաստանի խորհրդարանի պատգամավոր **Խմիտրիս Տելեմախոսը**: Ս. Խ.

# Երկաթուղու Վանաձոր-Ֆիոլետովո հատվածը՝ անարդյունավե՞տ

*Երեւանում է «Ռուսական երկաթուղու» նախագահ Վլադիմիր Յակունինը*




Հայաստան այցելած «Ռուսական երկաթուղու» նախագահ **Վլադիմիր Յակունինը** երեկ հանդիսավորությամբ բացեց Երեւանի վերանորոգված երկաթուղային կայարանը եւ լոկոմոտիվային դեպոն: Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանի հետ նա շրջեց կայարանում, ծանոթացավ կատարված աշխատանքին եւ հույս հայտնեց, որ երկաթուղին էապես կնպաստի Հայաստանի տնտեսության զարգացմանը:

**Վլադիմիր Յակունինը** արդյունավետ համարեց «Ռուսական երկաթուղու» ներդրումները Հայաստանում, նշելով, որ այն մտահոգությունները, թե ճգնաժամը կարող է ազդել ընկերության ներդրումային ծրագրի վրա, չիրականացան: Մասնավորապես, «Հարավկովկասյան երկաթուղում» կատարվել են 1,1 մլրդ ռուբլու ներդրումներ:

Խոսելով Հայաստանի Վանաձոր-Ֆիոլետովո երկաթուղու հատվածի շինարարության մասին, «Ռուսական երկաթուղու» նախագահն ասաց, որ ամեն ինչ պետք է դիտարկել տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից: «51 կմ այդ հատվածի շինարարությունը կարժենա 6 մլրդ ռուբլի, այդ պատճառով վստահ չեմ, որ դա արդյունավետ կլինի երկաթուղային փոխադրումների համար», նշեց Վլադիմիր Յակունինը:

Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարար **Մանուկ Վարդանյանն** էլ նշեց, որ երկաթուղու վերոնշյալ հատվածի կառուցումը կապ չունի կոնցեսիոն պայմանագրի հետ, այլ կառավարության ծրագրով նախատեսված քայլ է: Նա հայտնեց, որ օրվա ընթացքում այս հարցի վերաբերյալ վերջնական որոշում կընդունվի:

Վրացական երկաթուղու կոնցեսիոն կառավարումը վերցնելու մասին լրագրողների հարցին Վլադիմիր Յակունինը պատասխանեց, որ դեռ բանակցություններ չեն վարվել եւ «չեն էլ վարվելու»:

Երեկ «Ռուսական երկաթուղու» նախագահը հանդիպել է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ: Ա. Մ.

# Մինչեւ տուն կհասնես…

Շունչդ կտրած սպասում ես, թե ուր որ է հերթական կանգառում ուղեւորներից մեկը կիջնի ու տեղ կազատվի: Ա՜յ սա բախտ է, բայց թե ո՞ւմ կվիճակվի նստել: Հեղձուկը գնալով անտանելի է դառնում, գաղջ օդը խեղդում է, ակամայից խորշանք է առաջացնում իրար վրա անկանոն ընկած մարդկային մարմինների հանդեպ: Վախենում ես հայացքդ մեկի հայացքին առնի եւ այնպիսի հոգնածություն ու անկենդանություն տեսնես, որ սիրտդ մարի: Հանկարծ մեջդ ինչ-որ բան ընդդիմանում է, հոգնածությունդ միջիցդ դուրս է հանում մի կայծ, ու սկսում է միտքդ այդ բողբոջի հետ խոսել: Թե չէ իր հերթին իր հոգնած մարմինը քարշ տվող երթուղային տաքսու ընթացքը թվում է՝ վերջ չի տալու ընկճված վիճակին:

Հանգիստ շունչ ես քաշում, երբ վարորդը հերթական կանգառին մոտենալիս, հարցնում է՝ իջնող կա՞… որ ավելորդ տեղը մեքենան եւս մեկ կքված մարմնի տնքոցով չբեռնի: Բարեբախտաբար, լինում են նաեւ հումորով վարորդներ, որոնք լավ գիտեն, թե իրենց թիկունքում ինչ է կատարվում ու թեթեւ խոսքով թուլացնում են լարվածությունը, ինչպես երեկվա 76 համար երթուղայինի վարորդը:

Հենց այդ պահին երանությամբ հիշում ես քաղաքային մետրոն՝ սառը քամին, ընդարձակ սպասասրահը, ուղեւորներն էլ՝ քիչ: Հետն էլ հիշում ես ճանապարհին հանդիպածդ հարեւանի ասածը, թե՝ մետրոն փրկություն է: Շատ ճիշտ է: Բայց արի ու տես՝ այստեղ էլ բախտ պիտի ունենաս: Արագությամբ հասնում ես մետրոյի դռներին, մուտքի մոտ նստած 2 ոստիկան անհոգ նետում են տրամադրությունդ գցող 2 բառ՝ մետրոն փակ է: Ժամը 23-ն անց է հինգ րոպե: Ափսոսանքով բարձրանում ես աստիճաններով, հետդ էլ շատ ուրիշներ՝ դեռ պետք է հասնել կանգառ ու երկար սպասել երթուղային տաքսիին, կես ժամ մեջքդ կռացած գնալուն պատրաստ: «Ընդամենը 5 րոպե, շատ չէք ուշացել», հումորի էր տալիս ոստիկանը, բայց չգիտեր՝ այդ հինգ րոպեն ինչ է նստում վրադ:

Այս ամենը, ամեն երեւանցու այնքան ծանոթ բան է, որ թվում է՝ ավելորդ է գրել: Սակայն գրածս մետրոպոլիտենի ղեկավարությանն եմ ուղղում: Քանի որ մետրոն ոչ միայն ամենահարմար եւ հուսալի հասարակական փոխադրամիջոցն է, իսկ այս ծանր շոգերին՝ ուղղակի փրկություն, կարծում եմ, ընդառաջելով բնակչությանը, մետրոյի աշխատանքային օրը կարելի է մեկ ժամով երկարաձգել՝ մինչեւ 24.00:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ



# Հարավային Կովկասը՝ Քլինթոն-ԵԱՀԿ ՄԽ փոխաստեղումներով

*1-ին էջից*

**Թերեւս ադրբեջանական աղբյուրները տվյալ դեպքում կարող են նման հայտարարություն անել, սակայն դա չի նշանակում, թե նման հանդիպում չի նախատեսվում, քանի որ Կանադայում հունիսի 26-ին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երեք երկրների նախագահների արած հայտարարության համաձայն, այդպիսի հանձնարարություն տրվել է համանախագահող կողմերը ներկայացնողներին, այնպես որ առանձնակի հաստատման կարիք չկա:**

**Առավել հետաքրքրական է, որ համանախագահների այցելության օրերին հարավկովկասյան տարածաշրջանում կլինի նաեւ ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը, որի, ինչպես Հայաստանում, այնպես էլ Ադրբեջանում ունենալիք հանդիպումների օրակարգում ղարաբաղյան խնդիրը հաստատապես ներգրավված է:**

**Հուլիսի 4-ին՝ ԱՄՆ անկախության օրը, Քլինթոնը կլինի Բաքվում, այդուհետեւ կայցելի Հայաստան՝ վերջնակետ ունենալով Վրաստանը: Ստացվում է, որ երբ համանախագահները կլինեն Երեւանում, Քլինթոնը կլինի Բաքվում: Իսկ երբ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները դեռեւս Բաքու հասած չեն լինի, բայց եւ հստակ չէ, թե որտեղ կլինեն, Հայաստան կգա Քլինթոնը:**

# Կոմանդոս. «Հայկական զորքի դուրսբերումը ազատագրված տարածքից նշանակում է Հայաստանի կործանում»

*1-ին էջից*

**Համեմատական անցկացնելով հայկական եւ ադրբեջանական բանակների միջեւ՝ Արկադի Տեր-Թադեւոսյանն առանձնացնում է, որ ադրբեջանական բանակը քանակական առումով մեծ է, քան՝ հայկականը: Սակայն քանակը դեռ չի նշանակում որակ: «Ադրբեջանական բանակում մեծամասնություն են կազմում ազգային փոքրամասնությունները՝ թալիշներ, վրացիներ, լեզգիներ, որոնք այնքան էլ չեն ցանկանում պայքարել հանուն Ադրբեջանի եւ Ալիեւի կլանի: Ինչպես յուրաքանչյուր երկրում, այնպես էլ Ադրբեջանում, երկրի հարստությունը պատկանում է ոչ թե ժողովրդին, այլ՝ իշխանություններին: Հետեւաբար, երբ ասում են՝ Ադրբեջանը նավթի երկիր է, եւ Բաքվում մարդիկ երջանիկ են՝ սուտ է: Ադրբեջանում ներքին մթնոլորտը սրված է, եւ դա արտացոլվում է նաեւ բանակում»:**

**Կոմանդոսը չի բացառում ռազմական գործողությունների վերսկսումը, բայց եթե սկսվի, սկզբնական շրջանում հաղթանակը Ադրբեջանի կողմը կլինի: «Ադրբեջանն այդ հաղթանակը կապահովի փողի եւ տեխնիկայի օգնությամբ: Կլինեն բազմաթիվ զոհեր, սակայն որոշակի պահի հայկական կողմը մարդկային գործոնի շնորհիվ հաղթանակ կտանի: Ադրբեջանում սպաները ստիպում են զինվորներին, որ կռվեն: Դա իրենց հայրենիքը չէ եւ չեն ցանկանում օտար հողի համար մահանալ: Այս դեպքում հայկական կողմը ոչ միայն դուրս կշպրտի ագրեսորին, այլ ռազմական գործողություններ կծավալի սահմանից այն կողմ»:**

**Հայկական կողմը գիտե Ադրբեջանի թույլ տեղը. դրանք նավթամուղներն ու գազամուղներն են, եւ հնարավոր ռազմական գործողության պարագայում առաջին հերթին հայկական կողմը դրանք կպայթեցնի: «Այդ նավթի միայն 15 տոկոսն է պատկանում Ադրբեջանին, մնացյալը՝ Անգլիային, եւ նա թույլ չի տա Ադրբեջանին վտանգել իր հարստությունը՝ պատերազմ սկսելով Հայաստանի հետ»:**

**Կոմանդոսը հավելում է, որ եթե ռազմական ճանապարհով Ադրբեջանը չկարողանա հաղթել, գուցե հաղթի դիվանագիտական ճանապարհով: Ներկայացնելով G-8-ի հայտարարությունը՝ ասաց, որ դա հայկական դիվանագիտության պարտությունն էր:**

**«Երբեւէ չեմ կարդացել ավելի բացասական հայտարարություն Հայաստանի մասին: Տեքստում ասվում է՝ «Հանել զորքը տարածքներից»: Դա միանշանակ օգնում է ադրբեջանական կողմին: Հայկական զորքի դուրսբերումը ազատագրված տարածքներից ողբերգություն է եւ Հայաստանի կործանումը: Սրանով կկերտվի պարտվողական Հայաստանի ապագան: Կսկսենք մեր թշնամիների մեջ փնտրել ընկեր, հետո մեր ընկերների մեջ՝ թշնամի: Դա կկործանի մեզ», ասաց նա՝ հավելելով, որ Քլինթոնի այցը Հայաստան հետապնդում է մեկ նպատակ՝ կյանքի կոչել G-8-ի հայտարարությունը:**

**Արտաքին քաղաքականության ուղեգիծը գնահատելով «2», Կոմանդոսը հիշեցնում է՝ հայկական կողմը դիվանագիտական պարտություն է կրել 1994թ, երբ Բիշքեկում կնքվեց հրադադարի համաձայնագիր: «Համաձայնագրի կետերից մեկում Ադրբեջանը պահանջում է զորքերի դուրսբերում տարածքներից: Պատերազմում պարտվող կողմը նման պահանջ է դնում, եւ հաղթող կողմը դա ընդունում է: Մեր նախագահները իրար հետեւից սխալներ են գործում: Պետք է հասկանանք, թե ինչու սխալվեցինք, որ հասանք այս արդյունքին»:**

# Վահե Գաբրիելյանը՝ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի առաջին ռեկտոր

**Հայաստանի ԱԳՆ դիվանագիտական դպրոցում երեկ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը ներկայացրել է նորանշանակ ռեկտոր Վահե Գաբրիելյանին. «Դեսպան Գաբրիելյանի կուտակած փորձն ու հմտությունները անշուշտ կնպաստեն դպրոցի առջեւ դրված խնդիրների իրականացմանը», ասել է արտգործնախարարը՝ հավելելով, որ ԱԳՆ կադրերի դարբնոցի առաջին ղեկավարը դառնալը պատվաբեր, միաժամանակ պարտավորեցնող ու բարդ աշխատանք է:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 01/07/2010 22:23 Page 1



# Անցուդարձ

## Իրական սպառնալիքը թերեւս ներքին թուլությունն է

Այն տպավորությունն է ստեղծվում, թե ղարաբաղյան հակամարտության վերջնական կարգավորումը իրականում ձեռնտու չէ գերտերություններին, իսկ միջազգային հարթակներից հնչող տարառիք հայտարարությունները, որպիսին ԱՄՆ, Ֆրանսիայի ու Ռուսաստանի նախագահների վերջին հայտարարությունն է, պարզապես թեման տաք պահելու նպատակ են հետապնդում:

Ակնհայտ է, որ մեծ տերությունների հավակնությունների դաշտում Հարավային Կովկասը դեռեւս մնում է որպես փոխշահերով չկարգավորված տարածք, որտեղ հատկապես Ռուսաստանը եւ ԱՄՆ-ը ազդեցության սեփական ձգտումներն ունեն:

Անշուշտ, իրավիճակի արհեստական ապակայունացումը ներգործության ավելի շատ լծակներ ձեռք բերելու փորձված ձեւ է, բայց հազիվ թե մեր հյուսիսային հարեւանին իր նախկին պրեֆեկտներում անկայուն վիճակը ներկա պահին ձեռնտու է, որովհետեւ անկայուն իրավիճակը կարող է առաջադրել նաեւ ազդեցության այլ ուժերի ներգրավվածություն, ինչը նա հազիվ թե թույլ տա:

Տարածքային վեճերը, եթե պատշաճ լուծում չեն ստանում, հաճախ հանգեցնում են պատերազմի, մինչդեռ Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ գոյություն ունեցող հակասությունը ոչ թե տարածքային, այլ կողմերից մեկի՝ Հայաստանի էթնիկ ու պատմական հատվածը կազմող Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հարթության մեջ է: Ավելի քան երկու տասնամյակ այս պարզ ճշմարտությունը չըմբռնելը կամ ընկալելով անտեսելը արդյո՞ք չի նշանակում, որ միջազգային հանրությունը հակված չէ տվյալ հանգույցը քանդելու: Ի վերջո, տեւական ժամանակ ղարաբաղյան խնդրով զբաղվել են աշխարհի ճակատագիրը վճռող տերությունների պաշտոնական ներկայացուցիչներ, նման հարցերում լայն փորձառություն ունեցող մասնագետներ: Իսկապե՞ս դժվար է քաղաքական լաբորատորիայում գտնել լուծման բանաձեւը...

Ղարաբաղյան կարգավորման պատմության ողջ ընթացքում մոտեցումների մի շարք հենակետեր են առաջ քաշվել, որոնք տարբեր անուններ են կրել՝ փարիզյան, քիվեսթյան, մադրիդյան եւ այլն: Դրանք բուն հարցից խուսափելու մտածված հնարքներ են, առավելապես ժամանակ շահելու միջոցներ: Եվ անսպասելի չի լինի, եթե մոտ ապագայում ի հայտ գա որեւէ տեղանվան հետ կապված նոր հենակետ, որտեղ սկզբունքները թեպետ էականորեն չեն տարբերվի նախորդներից, բայց փոխարենը կձեւավորվի բանակցային նոր ճակատ:

Ստատուս քվոն պահպանելու արդարացված ձեւը բանակցությունների շարունակումն է՝ անընդհատ նորամուծությունների ձեւով: Մինչեւ ե՞րբ. երեւի գիտեն միայն Կրեմլում ու Սպիտակ տանը, որոնք դիվանագիտորեն իրար աշխարհաքաղաքական ծրագրեր տորպեդահարելով, ձգտում են միեւնույն բանին՝ «սայլը տեղից չշարժել», քանի դեռ հայտնի չէ, թե «ով կլինի կառապանը»:

Կասկածահարույց է շրջանառվող այն տեսակետը, որ կարող է հակամարտող կողմերի միջեւ նոր պատերազմ հրահրվել ու առիթն օգտագործելով՝ խաղաղարար ուժեր մտցվել տարածաշրջան: Դրա համար պատրվակ միշտ էլ կգտնվի, թեկուզ եւ հաշվի առնելով ղարաբաղա-ադրբեջանական սահմանում (նաեւ Հայաստանի ու Ադրբեջանի սահմանահատվածներում) փաստացի պատերազմական վիճակը: Այլ կերպ ինչպե՞ս որակել զոհերով զուգակցվող սահմանային միջադեպերը եւ համարյա ամենօրյա դարձած փոխհրաձգությունները շփման գոտում:

Խաղաղարար զորքեր մտցնելու պատրվակ կգտնվի, հարցը պարզապես այն է, թե արդյո՞ք «նույն կաթսայում երկու եւ ավելի գլուխ կեփվի»: Մինչ գերտերություններն այս գլուխկոտրուկով են զբաղված, Ադրբեջանը պահն օգտագործելով ռազմատենչ հայտարարություններով կերակրում է սեփական ժողովրդին: Բնականաբար, բոլորն էլ քաջ գիտակցում են, որ ռազմատենչ պահվածքը Ադրբեջանի պարագայում ռեալ վտանգ չի պարունակում: Վտանգն այն ժամանակ կարող է ծառանալ, երբ Արեւմուտքն ու Ռուսաստանը ազդեցությունների ոլորտում համաձայնության գան, բայց դա այնքան էլ հեշտ գործընթաց չէ:

Եթե կա սպառնալիք, դա թերեւս ներքին թուլությունն է: Ոչ ուղղակի իմաստով, հակամարտության ներկա փուլը կարելի է անվանել կամքի փորձարկման շրջան. ով ավելի ամրակամ եղավ, նա առավել դիվիդենտներ կշահի եւ հենց դրանցով էլ կգնա հակամարտության՝ իր համար շահեկան վերջնալուծման:

Իսկ վերջնալուծումը, ինչպես 5, 10 կամ 15 տարի առաջ, ենթադրությունների հորիզոնում նշմարվող ամպի կտոր է, որը կարող է նաեւ հանդիպակաց քամիներից ցրվել:

**ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
**Ստեփանակերտ**

## Զարգացումը՝ վատից վատթարագույն

### *Դավիթ Շահնազարյանը՝ ԼՂՀ հակամարտության մասին*

Եթե Վրաստանում ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը կանդրադառնա Հարավային Օսիային եւ Աբխազիային եւ կոգեւորի վրացական իշխանություններին, որ ԱՄՆ-ն իրենց հետ է, Բաքվում կքննարկի Աֆղանստանի, Իրանի, ՆԱԲՈՒԿՈ-ի եւ Լեռնային Ղարաբաղի հետ կապված հարցեր, ապա Երեւանում Քլինթոնը կանդրադառնա հայ-թուրքական հարաբերություններին, ԼՂ հարցին ու մարդու իրավունքների պաշտպանությանը:

Սա ՀԱԿ ներկայացուցիչ **Դավիթ Շահնազարյանի** տեսակետն է հանգստյան օրերին տարածաշրջան այցելող Հիլարի Քլինթոնի ծրագրերի վերաբերյալ:

Շահնազարյանը համոզված է, որ հայ-թուրքական հարաբերություններում որեւէ առաջընթաց չի կարող լինել, որովհետեւ Թուրքիան ստացել է այն ամենը, ինչ ցանկանում էր: «Ռոբերտ Քոչարյանը Ղարաբաղին դուրս թողեց ղարաբաղյան հարցի կարգավորման ամբողջ գործընթացից, Սերժ Սարգսյանն իր ֆուտբոլային դիվանագիտությամբ Թուրքիային բերեց կարգավորում», ասաց նա «Իրավունք դե ֆակտո» ակումբում:

Նա համոզված է, որ ԼՂ հարցում մոտ ապագայում ոչ մի առաջընթաց չի լինի, սակայն զարգացումները



գնում են այնպես, որ Հայաստանի եւ Ղարաբաղի համար իրավիճակը զարգանում է վատից դեպի վատթարագույն: Հետեւաբար ՀԱԿ-ում ավելի շատ սպասում են, թե ԱՄՆ-ի պետքարտուղարն ինչ կասի Հայաստանում մարդու իրավունքների խնդիրների հետ կապված:

Մեկնաբանելով G-8 գագաթաժողովին ԱՄՆ-ի, Ռուսաստանի եւ Ֆրանսիայի նախագահների հայտարարությունը ղարաբաղյան խնդրի կապակցությամբ, ընդդիմադիր գործիչն ասաց, որ նպատակն էր վերջ տալ բանակցային գործընթացից դուրս գալու Ադրբեջանի սպառնալիքներին: «Հայտարարության մեջ արված սկզբունքները հետագա խմբագրման ենթակա չեն: Չափազանց մտահոգիչ է Հայաստանի դիվանագիտության մակարդակի օրեցօր վատթարացումը: Այն անցել է բոլոր ընդունելի եւ անընդունելի սահմանները: Այն, ինչ կատարվում է՝ խայտառակություն է»:

### Ռոբերտ Քոչարյանին՝ Հաագայի դատարան

ՀԱԿ-ը մարտի 1-ի գործով ՀՀ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի դեմ հայց է ներկայացրել Հաագայի դատարան, եւ դատարանն այն գրանցել է.

«Սա դիմում է՝ ստորագրված տասնյակ հազարավոր մարդկանց կողմից, եւ չափազանցություն չի լինի ասել, որ ամբողջ հայ ժողովրդի կողմից է ներկայացված: Թող ոչ մեկը կասկած չունենա, որ ժամանակավորապես ազատության մեջ գտնվող Ռոբերտ Քոչարյանը կանգնելու է դատարանի առաջ եւ պատասխան է տալու հայ ժողովրդի եւ մարդկության առաջ կատարված իր հանցագործությունների համար»:

Հ. Հ.

## Վահան Փափազյա՞նը կդառնա ՀՀՇ ղեկավար

ՀՀՇ համագումարում, ի թիվս այլ թեկնածուների, կուսակցության նախագահի պաշտոնի համար առաջադրվելու է նաեւ Հայաստանի նախկին արտգործնախարար Վահան Փափազյանի թեկնածությունը: Ըստ «Պանորամա» լրատվական կայքի աղբյուրների՝ Փափազյանն ունի Լեւոն Տեր-Պետրոսյանի «դաբրոն», որը կարող է նշանակել, թե հենց նա կդառնա ՀՀՇ նախագահը: Ըստ արդեն հայտնի տեղեկատվության՝ այս պաշտոնի համար առաջադրվելու են նաեւ անազատության մեջ գտնվող Հարություն Ուռուտյանը (ՀՀՇ եւ ԵԿՄ անդամ), Աշոտ Մանուկյանը (ՀՀՇ անդամ), Արամ Բարեղամյանը (ՀՀՇ Հրազդանի տարածքային կառույցի ղեկավար):




## Իսկ ինչո՞ւ եք եկել ասուլիսի, պարոն Մուրադյան

***Քաղաքագետ, վերլուծաբան Իգոր Մուրադյանի երեկվա ասուլիսի թեման «Եռյակի» հայտարարությունն էր, Քլինթոնի առաջիկա այցը տարածաշրջան եւ վերջին զարգացումները տարածաշրջանում: Բանախոսի ասուլիսը կարելի է բաժանել երկու հատվածի՝ «իրական» եւ «էլ ավելի իրական»:***

### «Իրական»



**«Վերջին տարում ԱՄՆ-ի հետաքրքրությունը Կովկասի հանդեպ նվազել է. Կովկասի նավթն այլեւս ռազմավարական նշանակություն չունի Վաշինգտոնի համար, այն ավելի շուտ առեւտրային նշանակություն ունի: Իսկ տարածաշրջանը ԱՄՆ-ին հետաքրքրում է ռազմական տրանզիտի ապահովման առումով», նշեց Մուրադյանը: Ըստ բանախոսի՝ տարածաշրջանում ԱՄՆ-ի համար առաջացել են երեք նոր խնդիրներ, «ու հենց այդ խնդիրները լուծելու համար Հիլարի Քլինթոնը ժամանում է Կովկաս»: «Ունենալով մեծ հույսեր Մեդվեդեւ-նախագահից եւ ստանալով վերջինիս՝ Արեւմուտքին ուղղված մի շարք դրական մեսեջները, Քլինթոնը ինչ-որ կերպ կփորձի Ռուսաստանին ներգրավել ԱՄՆ-ի տարածաշրջանային պլանների մեջ: Երկրորդը Թուրքիայի գործոնն է, որ իր՝ դեպի մահմեդական արեւելք «շրջադարձով» լուրջ խնդիր է դարձել ԱՄՆ-ի համար: Ես վերջերս ԱՄՆ-ում էի, եւ այնտեղ շատ փորձագետներ նշեցին, որ, գիտակցելով թուրքական ակտիվության վտանգը, այնուամենայնիվ Վաշինգտոնում ձեւացնում են, թե դա իրենց չի սպառնում: Ուրեմն Քլինթոնը կփորձի Անկարային հասկացնել, որ վերջինիս համար Արեւմուտքում ամեն ինչ կորած չէ, որ կարելի է դեռ համագործակցել: Իսկ թուրք-ամերիկյան համագործակցության դաշտ ես տեսնում եմ միայն Կովկասում»: Երրորդ խնդիրը, որը կփորձի լուծել Քլինթոնն իր տարածաշրջանային այցելությամբ, ըստ Մուրադյանի, այն է, որ Արեւելյան Եվրոպայի, նաեւ Կովկասի որոշ երկրներ գտնում են, որ ԱՄՆ-ը իրենց «դավաճանել» է. «Քլինթոնը կասի, որ դա այդպես չէ», գտնում է Իգոր Մուրադյանը:**

**«Եռյակի» հայտարարության հետ կապված, որը, բանախոսի խոսքերով, նույն մադրիդյան սկզբունքներն են, քաղաքագետը նշեց, որ դրանց իրագործմամբ կսկսվի Հայաստանի կործանումը. «Ըստ որում՝ սա միայն իմ կարծիքը չէ, այս մասին ինձ հայտնել են ռուս եւ ամերիկացի առաջատար փորձագետներ: Ինձ զարմացնում է Հայաստանի իշխանությունների համաձայնությունը այդ հայտարարությանը: Կարծում եմ, որ Երեւանը պետք է իր սկզբունքային դիրքորոշումը հայտնի շահագրգիռ տերություններին, Սերժ Սարգսյանը պետք է բարձրաձայնի, որ այդ սկզբունքները հայ ազգի կործանումն են: Այնինչ Հայաստանը ոչ միայն ողջունում է հայտարարությունը, այլեւ պատրաստակամություն հայտնում շարունակելու բանակցությունները՝ նույն սկզբունքներով, գիտենք, որ Նալբանդյանը շուտով կմեկնի Ղազախստան հենց այդ նպատակով», ասաց Մուրադյանը:**

### Էլ ավելի իրական»

**Մուրադյանի այն միտքը, որ հայկական կողմը ամբողջովին համաձայնել է եռանախագահների հայտարարությանը, առավել եւս՝ դրանում տեղ գտած գործողությունների հերթականությանը, տարակուսանք է առաջացնում երկու պատճառով, նախ՝ եռանախագահներից ոչ ոք չի շեշտել, որ նշված գործողությունների հերթականությունը պետք է պահպանվի. հայտարարության տեքստում պարզապես չկա այդպիսի բան, բացի այդ՝ Հայաստանը մշտապես հայտարարել եւ հայտարարում է՝ հայկական կողմի համար առաջնայինը Ղարաբաղի կարգավիճակի որոշումն է: Ուրեմն ի՞նչ է սա, եթե ոչ «հայկական սկզբունքային դիրքորոշման հայտնում շահագրգիռ տերություններին»:**

**Հենց այս լրագրողական միջամտությանը Իգոր Մուրադյանը պատասխանեց... վիրավորելով հայկական բոլոր լրատվամիջոցներին, լրագրողներին, վերջիններիս մեղադրեց ծախված լինելու, «իրենց քաղաքագետ դնելու» մեջ. «Բայց ոչինչ, շուտով ձեզանից ոչինչ չի մնա», ասաց Մուրադյանը՝ չպարզաբանելով թե այդ կոնկրետ ումի՞ց, ե՞րբ եւ ամենակարեւորը՝ ինչո՞ւ... Ինչ է՝ լրագրողը չի՞ կարող սեփական կարծիքն ունենալը, կարծիք ունենալը նշանակում է «քաղաքագետի» դիպլո՞մ» ստանալ, այդ պարագայում ինչո՞ւ է Մուրադյանը հայտնում իր կարծիքը, ինչո՞ւ է գալիս ասուլիսի՝ մանավանդ որ այնտեղ «բոլորս ծախված ենք, քաղաքագետ, անտակս...», երեւի նրա համար, որ հիշեցնի՞, թե «շուտով մեզանից էլ ոչինչ չի մնա»:**

**ՆՈՎԻԿ ԱՓՅԱՆ**

**Հ. Գ.** - Մուրադյանը խոսեց նաեւ Ղարաբաղի ժողովրդից՝ նշելով, թե «իշխանությունները նրանց կամազուրկ են դարձրել»: Որպես խոսքերի ապացույց՝ բանախոսը բերեց ԼՂՀ խորհրդարանական վերջին ընտրությունների արդյունքները. «Ոչ մի բողոք չեղավ, մի՞թե դրանք ընտրություններ էին», ասաց Մուրադյանը: Սակայն ղարաբաղցու կամքի պակասի մասին խոսել՝ մանավանդ դրան հակասող ակնհայտ փաստերի առկայությամբ, առնվազն թյուրիմացություն է: Դա կնշանակի ոգեւորել հակառակորդին, ինչպես նաեւ վիրավորել արցախցու արժանապատվությունը:

AZG NEW PDF.qxd 01/07/2010 22:22 Page 1



# Տիգրան Սարգսյան. ԼՂՀ ժողովրդի կարծիքը լինելու է կողմնորոշիչ, եւ դրա հիման վրա են տրվելու լուծումները

*1-ին էջից*

Բնականաբար այս ծախսերի ավելացումը պետության կողմից հնարավորություն տվեց մեղմելու բոլոր սոցիալ-տնտեսական բացասական ազդեցությունները մեր տնտեսական համակարգի վրա, որոնք գալիս էին առաջին հերթին մասնավոր ներդրումների եւ մասնավոր տրանսֆերտների կրճատման արդյունքում: 2009 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից նկատեցինք, որ մեր հակաճգնաժամային ծրագիրը տալիս է դրական արդյունքներ, քանի որ ամեն ամիս նախորդ ամսվա համեմատ գրանցվում էր տնտեսական ցուցանիշների բարելավում: Եվ 2010-ի առաջին եռամսյակում 2009-ի համեմատ արձանագրել ենք 8,8% տնտեսական աճ: Նման աճ է գրանցվել նաեւ մասնավոր սեկտորի աշխատավարձերում, ինչը կարեւոր հանգամանք է սոցիալական հարցերի լուծման համար: Արդեն որոշում ենք կայացրել այս տարի 15%-ով ավելացնել սոցիալական նպաստները, որոնք տրվում են անապահով, սոցիալապես խոցելի խավերին, ինչպես նաեւ մտադիր ենք նոյեմբերից 10 տոկոսով ավելացնել կենսաթոշակները:

Այսօր միջին թոշակը կազմում է 28 հազար դրամ:

**- Վերջին շրջանի Ձեր ելույթներում մեծ տեղ եք հատկացնում Հայաստանի խոշոր բիզնեսի եւ օլիգարխների կողմից հարկերի պարտաճանաչ վճարմանը եւ ստվերային մասը հարկային դաշտ բերելու խնդիրներին: Որքանո՞վ է դա Ձեզ հաջողվում, քանի որ գաղտնիք չէ, եւ դա միայն Հայաստանի խնդիրը չէ, նույնիսկ Եվրոպայում շատ դժվար է օլիգարխիկ համակարգի դեմ պայքարը: Կառավարությունը, նախագահը եւ իշխող կուսակցությունը որքանո՞վ են Ձեզ աջակից այս հարցերում: Ստացվո՞ւմ է այդ պայքարը, թե՞ ամեն դեպքում պատի եք դեմ առնում:**

- Հասկանալի է, որ անհրաժեշտ է իրականացնել համակարգային բարեփոխումներ: Ճգնաժամի կարեւորագույն դասերից մեկն այն է, որ մեր տնտեսությունն ունի ցածր դիվերսիֆիկացիա: Պետք է դրա աստիճանը բարելավել: Իսկ դրա լավագույն ճանապարհը բիզնես միջավայրի բարելավումն է, հավասար մրցակցային պայմանների ստեղծումը, փոքր եւ միջին բիզնեսի շահերի պաշտպանությունը, եւ դրանց համար բարենպաստ միջավայրի ստեղծումը, իսկ խոշոր բիզնեսի համար՝ թափանցիկ աշխատանքի պայմանների ապահովումը: Առաջին լուրջ քայլը, որ մենք իրականացրինք. անցած տարի Ազգային ժողովն ընդունեց օրենք, որով մեկ միլիարդից ավելի շրջանառություն ունեցող կազմակերպություններն իրենց հաշվետվությունները պետք է հրապարակեն արտաքին աուդիտի եզրակացության հիման վրա, ինչը հնարավորություն կտա, որ հասարակությունը վերահսկի խոշոր ձեռնարկություններին, թե ինչպես են նրանք աշխատում եւ ի՞նչ ֆինանսական արդյունքներ են ցույց տալիս: Մյուս կողմից դա էական օժանդակություն կլինի պետական եկամուտների կոմիտեին, որպեսզի վստահություն լինի նման ձեռնարկությունների նկատմամբ եւ համահավասար մրցակցային պայմաններ ձեւավորվեն: Ընդհանրապես թափանցիկության ապահովումը համարում ենք առաջին եւ ամենակարեւոր գործիքը, որպեսզի խոշոր բիզնեսը ձգտի աշխատել օրինական դաշտում եւ վայելի հասարակության վստահությունը, ինչն ամենակարեւորն է: Համոզված ենք, որ դա արդյունք կտա: Երկրորդը հարկային վարչարարության բարելավումն է: Մենք ունենք մեծ համալիր ծրագիր՝ հաստատված կառավարության կողմից, եւ տեխնիկական ու ֆինանսական աջակցություն՝ միջազգային կազմակերպություններից բարեփոխումներն իրականացնելու համար: Հույս ունենք, որ մոտակա երեք տարիների ընթացքում բարեփոխումներն իրենց դրական արդյունքը կտան: Այս ծրագրերը գտնվում են նախագահի հսկողության ներքո եւ ստացել են կոալիցիոն կառավարության հավանությունը:

**- Շատ հաճախ ոչ միայն սփյուռքահայ, այլեւ տեղացի փոքր եւ միջին բիզնեսի ներկայացուցիչները բողոքում են իրենց վրա տարբեր կլանային խմբերի ազդեցություններից: Թեեւ, օրինակ, մեզ տված հարցազրույցում «Վիվասել-ՄՏՍ»ի գործադիր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը պնդում էր, որ Հայաստանում բիզնես սկսելու համար պետք է բիզնեսի գլխին կանգնած լինես, որպեսզի այն առաջ գնա: Այստեղ երկու խնդիր կա: Դուք տարբերակում դնո՞ւմ եք սփյուռքահայ եւ տեղացի գործարարների միջեւ, շահագրգռում կամ նպաստո՞ւմ եք, որ սփյուռքահայը գա Հայաստանում ներդրում կատարի: Որքանո՞վ եք աջակցում հայաստանցի անպաշտպան փոքր եւ միջին բիզնեսի ներկայացուցչին, որպեսզի նա կարողանա զրոյից նոր գործ սկսել:**

- Կցանկանայի հարցը բաժանել երեք մասի: Գաղտնիք չէ, թե ինչպես անցումային շրջանի շատ երկրներում կան շատ դժվարություններ՝ ստվերային տնտեսություն, կոռուպցիա, որը խոչընդոտում է միջին բիզնեսի զարգացմանը: Քաղաքականությունը, որ որդեգրել է ՀՀ կառավարությունը երկրի նախագահի գլխավորությամբ, հետեւյալն է՝ մենք ինքներս պետք է բաց խոսենք առկա խնդիրների մասին: Պետք է բացահայտենք իրականության այդ պրոբլեմները եւ լուծենք դրանք: Մյուս կողմից բիզնես միջավայրի առողջացման ոլորտում տասնյակ օրենքներ ու նորմատիվային ակտեր են ընդունվել, որոնց նպատակն է ավելի հարմար միջավայր ստեղծել փոքր եւ միջին բիզնեսի զարգացման համար: Երկրորդը՝ մի կարեւորագույն սկզբունք ունենք տնտեսական միջավայր ձեւավորելու համար՝ որեւէ խտրականություն չպետք է դնենք հայկական արտադրողի եւ օտարերկրյա ներդրողի միջեւ: Բոլորի համար սահմանվում են հավասար ռեժիմներ: Կարեւոր չէ, ներդնողը սփյուռքահայ է, թե արտասահմանցի: Երկուսն էլ հավասարապես օգտվում են մեր օրենսդրության հնարավորություններից: Կա նաեւ մեկ կանոն, որ եթե ազգային օրենսդրության փոփոխության ժամանակ օրենսդրությունը խստանում է, ապա օտարերկրյա ներդնողների համար երեք տարի դեռեւս կիրառվում է նպաստավոր ռեժիմ, որպեսզի նրանց համար հարմարավետ լինի բիզնես որոշումներ կայացնելը: Երրորդն այն է, որ սփյուռքի հետ կապերն ամրապնդելու նպատակով ստեղծել ենք սփյուռքի հարցերով զբաղվող նախարարություն, որի նպատակն է ամրապնդել սոցիալական, տնտեսական, մշակութային եւ բազմաբնույթ կապերը, ներառելով նաեւ կրթական խնդիրներ:

Բնականաբար ստեղծվում են ասոցիացիաներ, այդ թվում՝ բիզնես ասոցիացիաներ, որոնք խթանում են մասնավոր ներդրումները, այդ թվում՝ Սփյուռքից դեպի Հայաստան:

**- Իսկ որքա՞ն տոկոս է կազմում սփյուռքահայության մասնակցությունը Հայաստանի տնտեսության մեջ: Կա՞ նման վիճակագրություն:**

- Սփյուռքահայերինն առանձնացված չունենք, այլ հաշվարկած ունենք օտարերկրյա ներդրումները մեր տնտեսության մեջ: Այդ ցուցանիշն ավելանում է: Անցած տարի մենք ունեցանք այդ ներդրումների կտրուկ անկում, որոնք գալիս էին նախ եւ առաջ Ռուսաստանի Դաշնությունից եւ ԱՄՆ-ից, որտեղ մեր ամենախոշոր համայնքներն են: Եվ այդ ներդրումների կրճատումը՝ շուրջ 30 տոկոսով, իր ազդեցությունն ունեցավ մեր ներքին համախառն արդյունքի ցուցանիշի վրա: Դա նշանակում է, որ սփյուռքահայության մասնակցությունը մեր տնտեսության մեջ մեծ է եւ շոշափելի: Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը մեր տնտեսության վրա զգացինք նաեւ այդ ներդրումների կրճատմամբ:

**- Իսկ ո՞ր ճյուղն եք համարում ամենահաջողվածը եւ կայացածը Հայաստանի տնտեսության մեջ:**

- Մեր բանկային համակարգը կարողացավ դիմագրավել համաշխարհային ֆինանսական ճգնաժամի բացասական ալիքներին եւ ցույց տվեց իր ամրությունը՝ ի տարբերություն շատ զարգացած երկրների: Մենք ոչ մի լումա օգնություն չենք ցուցաբերել մեր առեւտրային բանկերին: Նրանք ունեին բավարար կապիտալիզացիայի մակարդակ, բավարար լիկվիդայնություն, մշտապես սպասարկել են հաճախորդների հաշիվները: Ավանդները երաշխավորված էին, եւ մեր ավանդատուների հարցում խնդիրներ չառաջացան՝ ի տարբերություն Արեւմուտքի, ուր շատ պետություններ իբրեւ օժանդակություն միլիարդավոր դոլարներ տվեցին առեւտրային բանկերին, որպեսզի հաղթահարեն այդ խնդիրները: Իսկ մենք նման խնդիրներ չունեցանք: Դրանով ապահովվեց մեր պետության ամրությունը, եւ մենք կարողացանք դիմագրավել այս փորձությանը, իսկ մեր բանկային համակարգը դրանով քննություն բռնեց:

Երկրորդ կարեւոր ուղղությունը մեզ համար այն է, որ կառավարությունը շուրջ տասը տարի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտն արձանագրել է առաջնային: Եվ 2009-ին, եթե ընդհանուր տնտեսության մեջ անկում եղավ, ապա տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գրանցեցինք 17%-ի աճ, ստեղծեցինք նոր ընկերություններ, նոր աշխատատեղեր բացվեցին, եւ դրա տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքի մեջ կայուն աճում է՝ մոտենալով 5%-ի: Սա մի կողմից նպաստում է տնտեսության դիվերսիֆիկացիային, մյուս կողմից շատ հեռանկարային է Հայաստանի համար ու արտահանման համար ունի մեծ պոտենցիալ: Այժմ ցանկանում ենք ծրագրեր իրականացնել տուրիզմի զարգացման ոլորտում, գյուղատնտեսության ապրանքների վերամշակման ոլորտում, քիմիական արդյունաբերության եւ այլն:

**- Մեր հարեւան երկրները, հատկապես Թուրքիան եւ Ադրբեջանը, մեծ աշխատանք են տանում միջազգային լրատվամիջոցներով տուրիզմի գովազդի ասպարեզում: Հայաստանը մի ժամանակ նույնպես նման քայլեր էր ձեռնարկում, բայց վերջին շրջանում ոչինչ չի նկատվում: Կրկին ճգնաժա՞մն է պատճառը:**

- Բնականաբար ֆինանսական եւ տնտեսական ճգնաժամը ստիպեց վերանայել մեր բյուջեի ծախսային կառուցվածքը, եւ շատ ծախսեր ստիպված եղանք կրճատել: Բայց հիմա ստեղծել ենք ազգային մրցունակության խորհուրդ, որը մասնավոր-պետություն համագործակցության հայեցակարգն է մշակում, եւ այդ խորհրդի գլխավոր ծրագրերից մեկը հենց տուրիզմի զարգացման ուղղությունն է: Այդ ծրագրերը նոր թափ կհաղորդեն տուրիզմի զարգացմանը: Անցած տարվա ընթացքում տուրիզմը չի կրճատվել, նույնիսկ երեք տոկոսանոց աճ է եղել այդ ոլորտում, եւ եթե վերցնենք 2010-ի առաջին եռամսյակը, ապա օդային ուղեւորափոխադրումների ծավալի 5,5% աճ ունենք, եւ դա նաեւ տուրիզմն է ներառում:

**- Ընդդիմությունը հաճախ է քննադատում կառավարության տնտեսական ծրագրերը: Դուք որեւէ օգտակար բան տեսնո՞ւմ եք, որ կարելի է առանձնացնել եւ իրականացնել:**

- Ընդհանուր առմամբ ընդդիմությունը նրա համար է, որ քննադատի իշխանություններին: Դա օգտակար դեր է խաղում մեր հասարակական կյանքում, բացահայտում է թերությունները, ստիպում է, որ կառավարությունը նպատակային աշխատի, որպեսզի ապացուցի, որ որդեգրած քաղաքականությունը ճիշտ է եւ արդյունավետ:

Բնականաբար մենք հետեւում ենք բոլոր քննադատություններին, որ հնչում են մեր հասցեին, եւ փորձում ենք հանել այն դրական տարրը, որ կա այդ քննադատության մեջ, եւ կիրառել: Կարող եմ նշել, որ այն ծրագրերը, որ մենք մշակել ենք եւ այն, ինչ որ առաջարկում է ընդդիմությունը, մեծ մասամբ կրկնում են այն սկզբունքները, որոնք մենք ենք առաջ քաշել: Մասնավորապես խոշոր բիզնեսի թափանցիկ աշխատանքը, օլիգարխների դեմ պայքարը, փոքր եւ միջին բիզնեսի համար բարենպաստ պայմանների ստեղծումը, բարեփոխումների իրականացումը, տնտեսության դիվերսիֆիկացիան: Բնականաբար կան կետեր, որոնք մեզ համար անընդունելի են, որոնցով էլ տարբերվում են մեր ծրագրերը: Բայց ընդհանուր առմամբ ողջունելի է, երբ ընդդիմությունն առաջ է քաշում իր ծրագրերը:

**- Մեր ժողովրդին հուզում են հայ-թուրքական հարաբերությունները եւ ցեղասպանության ճանաչման խնդիրը: Նախագահ Սարգսյանի ելույթից հետո նոր փուլ է սկսվում, եւ բնականաբար հարց է ծագում, թե ի՞նչ է լինելու, ի՞նչ է սպասվում: Ցեղասպանության ճանաչման հարցով միայն պետք է զբաղվի սփյուռքի՞ ժողովուրդը, ժամանակը չէ՞, որ միջազգային դատական ատյաններում Հայաստանի կառավարությունը բարձրացնի ցեղասպանության իրավական գնահատման հարցը: Ընդհանրապես ի՞նչ դասեր քաղեցինք հայ-թուրքական արձանագրությունների հետ կապված պրոցեսից:**

- Առաջին հերթին փորձենք գնահատել, թե ի՞նչ արդյունքներ ունենք ՀՀ նախագահի Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավման նախաձեռնության արդյունքում: Պետք է նշեմ, որ էապես բարձրացել է Հայաստանի միջազգային վարկը: Մենք ստացել ենք Միացյալ Նահանգների, Եվրոմիության, Ռուսաստանի Դաշնության եւ այլ խոշոր պետությունների աջակցությունն այս նախաձեռնության վերաբերյալ, եւ համաշխարհային քաղաքական դաշտում բոլոր հեղինակավոր խաղացողները տվել են չափազանց բարձր գնահատական մեր սկզբունքայնության առումով եւ այն արձանագրությունների, որ ստորագրվեցին: Մենք ամբողջ աշխարհին ցույց տվեցինք, որ պատրաստ ենք կոնստրուկտիվ երկխոսության Թուրքիայի հետ, որ մենք պատրաստ ենք հարաբերությունների բարելավմանն առանց նախապայմանների, եւ մինչեւ վերջ մեր սկզբունքայնությունը պահպանեցինք: Դա չափազանց կարեւոր հանգամանք է: Վերջին երկու տարում միջազգային հանրությունը, միջազգային լրատվամիջոցները մանրամասն ներկայացրին Հայոց ցեղասպանության հարցը, նաեւ հայ-թուրքական հարաբերությունների առկա կնճռոտ հարցերը: Դա դարձավ միջազգային դիվանագիտության օրակարգային կարեւոր հարց, որովհետեւ առնչվում է նաեւ բազմաթիվ այլ միջազգային խնդիրների եւ ընկալումների, թե ինչպիսին պետք է լինի աշխարհը վաղը, եւ թե ինչպիսի դերակատարություն պետք է ունենանք մենք բոլորս՝ Թուրքիան, ԱՄՆը, Եվրոմիությունը, Ռուսաստանը, եւ ինչպիսի արժեքային համակարգի կրող ենք մենք բոլորս: Պրոցեսը ցույց տվեց նաեւ, թե որքանով են Թուրքիայի հռչակած սկզբունքները եւ իրականացվող քաղաքականությունը համընկնում, ինչը չափազանց կարեւոր է: Երրորդը, ցեղասպանության ճանաչումն ինքնանպատակ չէ: Մենք պայմանավորում ենք հայ ժողովրդի անվտանգ ապրելու իրավունքը այս տարածաշրջանում՝ ունենալով մի հարեւան, որը ոչ միայն ժխտում է ցեղասպանության փաստը, այլեւ իրականացնում է այնպիսի գործողություններ, որոնք առնվազն Հայաստանի մտահոգությունն են առաջացնում, թե որքանով հուսալի գործընկերոջ հետ գործ ունենք, որքանով է մեր հարեւանը պահպանում միջազգային դիվանագիտության մեջ ընդունված նորմերը, միջազգային հարաբերությունների պրակտիկան եւ կանոնները: Հատկապես Ղարաբաղյան խնդրում նրա որդեգրած՝ Ադրբեջանին միակողմանիորեն աջակցելու մոտեցումը, սահմանների փակ պահելը վկայում են, որ մենք ունենք լրջագույն խնդիրներ: Եվ ՀՀ նախագահի նախաձեռնությունը աշխարհի համար նույնպես առիթ դարձավ, որ նկատի առնվեն այդ խնդիրները: Իսկ հայ-թուրքական հարաբերությունների հարցը, դառնալով միջազգային քննարկման հարց, լինելով գերտերությունների ուշադրության կենտրոնում, բնականաբար մի նոր եւ լուրջ խթան դարձավ, որ ՀՀ անվտանգության ապահովման եւ խաղաղ ճանապարհով հարաբերությունների կարգավորման խնդիրը լինի միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Եվ դա, կարծում եմ, ինքնըստինքյան ստեղծում է լրացուցիչ խթան խաղաղ ճանապարհով ղարաբաղյան խնդրի կարգավորման առումով: Այնպես որ, այս երեք ուղղություններով մենք ունենք դրական արդյունքներ: Կա նաեւ չորրորդ հարթությունը: Այն է, որ հայ հասարակությունը, Հայաստանի քաղաքացիները եւ սփյուռքահայերը պետք է պատրաստ լինեն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման նոր փուլին: Մենք պետք է փորձենք Թուրքիայի հետ մեր հարաբերությունները կառուցել պրագմատիկ, աշխարհին միտված, Հայաստանի Հանրապետության շահերից բխող բազայի հիման վրա: Եվ մենք իրավունք չունենք մեր արտաքին քաղաքականության հիմքում դնելու հակաթուրքական քաղաքականություն: Մեր արտաքին քաղաքականությունը պետք է լինի հայամետ, հաշվարկների վրա հիմնված, իսկ այսօրվա հաշվարկները ցույց են տալիս, որ հարեւան Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը եւ բարելավումը բխում են նաեւ մեր պետության եւ ժողովրդի շահերից: Այլ խնդիր է, թե ինչպես պետք է այդ հարաբերությունները կարգավորվեն եւ թե ինչ սկզբունքների հիման վրա: Բայց որ դրանք պետք է կարգավորվեն, ակնհայտ է:

**- Իսկ միջազգային ատյաններում հարցը բարձրացնելու խնդի՞րը:**

- Սա առանձին եւ լուրջ խնդիր է՝ Հայոց ցեղասպանության խնդիրը դիտարկել զուտ իրավական դաշտում: Այստեղ մեծ աշխատանք պետք է կատարվի, եւ ճիշտ կլինի, որ այդ աշխատանքը լինի մեր սփյուռքի ուշադրության կենտրոնում:

**- Սփյուռքահայ իրավաբանների մի խումբ այդ խնդրով արդեն զբաղվում է:**

- Ես կարծում եմ՝ դա ճիշտ ռազմավարություն է, որ ցեղասպանության հետեւանքով ձեւավորված սփյուռքը փորձի իր պայքարը ծավալել ոչ միայն քաղաքական, այլեւ իրավական դաշտում, փորձելով ժամանակակից իրավագիտությունն օգտագործել եւ հասնել ինչ-որ

AZG NEW PDF.qxd 01/07/2010 22:23 Page 1



արդյունքների: Պետք է այս հարցերին մեծ ուշադրություն դարձնել, ինչը նախկինում կարծես մեծ ուշադրության չի արժանացել:

**- Դրա հետ է կապված նաեւ ղարաբաղյան խնդիրը: Այժմ շատ հաճախ է քննարկվում Ղարաբաղի մասնակցության հարցը բանակցային պրոցեսին: Այդ հարցն արդեն դրվե՞լ է բանակցությունների սեղանին:**

- Այդ հարցը միշտ գտնվել է մեր ուշադրության կենտրոնում եւ Մինսկի խմբի շրջանակներում պարբերաբար քննարկվում է, քանի որ ակնհայտ է` որեւէ լուծում ենթադրում է Լեռնային Ղարաբաղի մասնակցությունը: Դա անխուսափելի է: ԼՂՀ եւ նրա ժողովրդի կարծիքը լինելու է կողմնորոշիչ, եւ դրա հիման վրա են տրվելու լուծումները: Մենք որդեգրել ենք մի քաղաքական դիրքորոշում, որը հաստատել է դեռեւս Հայաստանի Գերագույն խորհուրդը, ըստ որի Հայաստանի Հանրապետությունը չի կարող ընդունել կարգավորման որեւէ բանաձեւ, որը ընդունելի չէ ԼՂՀ-ի համար:

**- Իսկ մոտ ապագայում տեսնո՞ւմ եք կարգավորման հնարավորություն:**

- Տեսնենք ինչպես կընթանան բանակցությունները:

**- Սովորաբար քաղաքական գործիչներին ներկայացնում ենք նաեւ իրենց աշխատանքից դուրս: Այժմ, իբրեւ կառավարության ղեկավար, բնականաբար շատ զբաղված եք եւ Ձեր երեք երեխաներին, ընտանիքին քիչ ժամանակ եք հատկացնում: Ի՞նչն է Ձեզ առավել հետաքրքրում աշխատանքից դուրս:**

- Աշխատանքից դուրս, եթե ազատ ժամանակ է լինում, նվիրում եմ ընտանիքին, երեխաներին, ովքեր իմ կարիքն ունեն, եւ որոնց կարիքն ունեմ ես: Շուտով իմ փոքրիկ տղան կդառնա երկու տարեկան, միջնեկը` ինը տարեկան է, աղջիկս այս տարի մեզ նվիրեց առաջին թոռնիկս:

**- Այսինքն` արդեն պապիկ եք:**

- Այո, բնականաբար դա մեզ համար երջանկություն է: Ինչպես ասում են` ընտանեկան բանտարկությունը երջանկություն է: Մենք փորձում ենք վայելել մեր ընտանեկան երջանկությունը:

Մյուս հետաքրքրության ոլորտը փիլիսոփայությունն է: Արդեն քանի տարի ազատ ժամերիս զբաղվում եմ մեթոդաբանությամբ, որը փիլիսոփայության կարեւոր ճյուղերից է: Փորձում եմ նաեւ ժամանակ տրամադրել սեմինարներին, որոնք մենք մեր գործընկերների հետ կազմակերպում ենք: Սիրում եմ նաեւ երաժշտություն, գրականություն:

**- Ի՞նչ երաժշտություն եք սիրում:**

- Ընդհանրապես բոլոր ոճերում էլ կան ստեղծագործություններ, որ շատ սիրում եմ: Վերջին շրջանում մենք խթանում ենք ռոք երաժշտության զարգացումը Հայաստանում: Փորձում ենք ստեղծել ռոք երաժշտության սիրահարների ասոցիացիա: Երեւի նկատել եք, որ վերջին տարվա ընթացքում համաշխարհային ռոք երաժշտության աստղեր են այցելել Հայաստան` «Յուրայ Հիփը», Յան Գիլանը, «Դիփ Փարփլը»:

Նաեւ մի այսպիսի գաղափար ունենք` կազմակերպել ռոք երաժշտության միջազգային փառատոն` «Ռոքն` ընդդեմ ցեղասպանության» խորագրով: Դա կվերաբերի ոչ միայն հայկական, այլեւ ընդհանրապես բոլոր ցեղասպանություններին: Այս բոլոր խմբերի հետ ես անձնապես բանակցել եմ, եւ բոլորը տվել են իրենց մասնակցության համաձայնությունը: Կարծում եմ, դա նաեւ Հայաստանի Հանրապետության իմ սերնդի քաղաքացիների համար բացառիկ հնարավորություն է` շփվել այն աստղերի հետ, որոնք սովետական տարիներին մեզ համար անհասանելի էին: Հայաստան այցելության ընթացքում նաեւ նրանց մի մասին պարգեւատրել ենք ՀՀ նախագահի եւ կառավարության բարձր պարգեւներով:

# Անհնարին «չեզոք անձնագիր»` Սուխումում եւ Ցխինվալում վրացական ներկայացուցչություններո՞վ

Վրաստանի Անվտանգության խորհուրդը քննարկել է Հարավային Օսիայի եւ Աբխազիայի հետ նոր տիպի հարաբերություններ հաստատելու հարցը: «Ազատության» տեղեկացմամբ, վրացական իշխանությունների ձեւավորած նոր փաստաթղթում նշվում է, թե վրացական նոր ռազմավարության նպատակը բաժանարար գծերի երկու կողմերում բնակվող մարդկանց համագործակցությանն ու շփմանը նպաստող բարենպաստ մթնոլորտի ձեւավորումն է:

Նախագիծն առաջարկում է հատուկ անձնագրեր բաժանել Աբխազիայի եւ Հարավային Օսիայի բնակիչներին: «Չեզոք անձնագիր» անվանումը ստացած փաստաթղթերի տերերը Վրաստանի քաղաքացիներ չեն համարվի, սակայն հնարավորություն կունենան բուժում ստանալու Վրաստանի տարածքում գտնվող հիվանդանոցներում, ընդունվելու վրացական բուհեր, Վրաստանում ազատորեն բիզնեսով զբաղվելու իրավունք կստանան:

Վրացական նոր ռազմավարության համապատասխան, արտերկիր ուղեւորվելու համար Աբխազիայի եւ Հարավային Օսիայի բնակիչներին կտրամադրվեն անձը հաստատող հատուկ «ճամփորդական փաստաթղթեր»: Նախագծի հեղինակների խոսքով` ուղեւորությունների ընթացքում անձը հաստատող նման փաստաթղթերից են օգտվում, օրինակ, ՄԱԿ-ի շատ աշխատակիցներ:

Վրաստանի կառավարության մշակած ռազմավարության մյուս առանցքային կետը Թբիլիսիում` Հարավային Օսիայի եւ Աբխազիայի, իսկ Ցխինվալում եւ Սուխումում` Վրաստանի հատուկ ներկայացուցչությունների բացումն է: Ըստ վրացական կողմի, «Միջնորդների գրասենյակ» անվանումը կրող այս կառույցների ղեկավարները յուրատեսակ դեսպաններ կդառնան, բայց առանց դիվանագիտական կարգավիճակի:

Ինչպես հայտնի ֆիլմում է ասվում, «թուղթը չի կարմրում, ինչ ասես կարելի է գրել»: Ա. Հ.

# Կանադա-Իսրայել մերձեցումը մտահոգում է կանադացիներին

«Մինչ Իսրայելի հարաբերությունները Մ. Նահանգների հետ վատացել են Օբամայի նախագահության ժամանակաշրջանում, Կանադայի հետ այդ հարաբերությունները ծաղկել են վարչապետ Հարպերի օրոք», գրում է անգլիական «Էկոնոմիստ» շաբաթաթերթի հունիսի 4-ի համարը «Անհավանական դաշնակիցներ» խորագրի ներքո: Հարպերը շատ ժամանակ չկորցրեց վերանայելու իր երկրի «ավանդական մոտեցումը Մերձավոր Արեւելքի նկատմամբ», եւ իր առաջին նախաձեռնություններից մեկը եղավ դադարեցնել պաղեստինյան իշխանություններին ֆինանսավորումը` «Համասի» հաղթանակից հետո: 2006-ին Հարավային Լիբանանի ռմբակոծումը Իսրայելի կողմից նա որակեց «կշռադատված» քայլ եւ մնաց այդ համոզմանը նույնիսկ այն բանից հետո, երբ պարզվեց, որ կանադացի յոթ քաղաքացիներ եւ ՄԱԿ-ի մեկ կանադացի խաղաղապահ սպանվել էին այդ ռմբակոծություններից:

Ճիշտ է, Կանադայի կառավարությունը չի փոխել իր դիրքորոշումը պաղեստինյան խնդիրը երկու պետություն հիմնելու ձեւով լուծելու, սակայն ՄԱԿ-ի քննարկումներում Կանադան համառորեն պաշտպանում է Իսրայելի տեսակետները: Ավելին, Կանադայի նախարարներից մեկի խոսքերով, «Իսրայելի վրա հարձակումը նշանակում է հարձակում Կանադայի վրա»:

Նման քայլերը շատ կանադացիների մտահոգություն են պատճառում: Նրանց կարծիքով, Կանադան դրանով կորցնում է «ազնիվ, անաչառ միջնորդ» լինելու իր միջազգային համբավը:

Հ. Ծ.

# Սենատը հաստատեց Աֆղանստանում ՆԱՏՕ-ի ուժերի նոր հրամանատարին

ԱՄՆ Կոնգրեսի վերին պալատը միաձայն հաստատել է գեներալ Դեւիդ Պետրեուսի նշանակումը Աֆղանստանում ՆԱՏՕ-ի ուժերի հրամանատարի պաշտոնում: Այդ մասին հաղորդում է BBC-ն:

Նախագահ Բարաք Օբաման անցյալ շաբաթ պաշտոնանկ էր արել գեներալ Մաքրիստալին` Rolling Stone հանդեսում նրա հրապարակած աղմկահարույց հոդվածի համար, որտեղ անվայել արտահայտություններ կան ԱՄՆ փոխնախագահի, այլ քաղաքական գործիչների եւ դիվանագետների հասցեին:

Սենատում տեղի ունեցած լսումների ժամանակ գեներալ **Պետրեուսը** զգուշորեն պաշտպանել է Աֆղանստանից զորքերը դուրս բերելու նախագահ Օբամայի ծրագիրը, միաժամանակ պահանջելով ուղղումներ անելու իրավունք:

Գեներալի կարծիքով, առաջիկա ամիսներին սպասվում են ծանր մարտեր: Ըստ Օբամայի, զորքերն Աֆղանստանից պետք է հեռանան 2011-ի հուլիսին, մինչդեռ գեներալը խոստովանել է, որ դուրսբերման արագությունն ու մասշտաբները կախված կլինեն իրավիճակից:

Դեւիդ Պետրեուսը ընդգծել է, որ դեռ շատ ժամանակ կպահանջվի, մինչեւ որ Աֆղանստանի անվտանգության ուժերը կարողանան ինքնուրույն վերահսկել երկրի իրադրությունը:

# Օբամայի ինդոնեզական մանկությանը նվիրված ֆիլմ



Ինդոնեզիայի մայրաքաղաք Ջակարտայում երեկ տեղի է ունեցել «Օբամա, Մենտենգի զավակ» ֆիլմի առաջին ցուցադրությունը: Ֆիլմի անվանումը հիշատակում է Ջակարտայի այն շրջանը, որտեղ ԱՄՆ ներկայիս նախագահը մոր եւ խորթ հոր հետ ապրել է 1967-1971 թթ.:

Ֆիլմը կառուցված է Բարաք Օբամայի մանկությանը նվիրված կենսագրական ստեղծագործության վրա, որը գրել է բեմադրիչ Դեմիեն Դեմատրան նրա ընտանիքի հարեւանների եւ բարեկամների հետ իր զրույցների հիման վրա:

Օբաման հանդես է գալիս ինդոնեզական տարազով` սարոնգով եւ մահմեդականի գլխարկով: Դպրոցի խուլիգանների հետ ծագող վեճերը նա լուծում է բացառապես խաղաղ միջոցներով: Սակայն ֆիլմի մեջ չեն մտել այն դրվագները, որտեղ պատանի Օբաման ընկերների հետ Ղուրան է ընթերցում մահմեդական դպրոցում:

Պրոդյուսեր Ռաամ Փանջաբիի խոսքերով, ֆիլմը հույսի, երազանքի ուժի, բարեկամության մասին է, այլ ոչ թե կրոնի կամ քաղաքականության: «Մեր ֆիլմում կյանքը պատկերված է երեխաների աչքերով: Չենք ձգտել միջամտել քաղաքականության, հավատքի հարցերին», ասել է Փանջաբին BBC-ին տված հարցազրույցում:

Ընդամենը 1 ամսում եւ 1 մլն դոլար բյուջեով ստեղծված ֆիլմում նկարահանվել են ինդոնեզացի գրեթե անհայտ դերասաններ:

14-ամյա գլխավոր դերակատար Հասան Ֆարուք Ալին ասում է, որ ինքը հասկացել է, թե որքան տարբեր կարող են լինել մարդիկ, եւ որպիսի հանդուրժողությամբ պետք է վերաբերվել այդ տարբերություններին: «Շատ կուզենայի, որ պարոն Օբաման դիտեր ֆիլմը: Հուսով եմ, դա նրա մեջ կարթնացնի հաճելի հիշողություններ», ընդգծել է դերասանը:

2008-ին Ինդոնեզիայում մեծ ոգեւորությամբ էր ընդունվել Բարաք Օբամայի հաղթանակը ԱՄՆ նախագահական ընտրություններում:



# «Համասի» առաջնորդի որդին ապաստան ստացավ ԱՄՆ-ում

**Այսրհորդանանում «Համաս» շարժման առաջնորդ Շեյխ Հասան Յուսեֆի որդին` իսրայելական հետախուզության հետ գործակցող Մոսաբ Հասան Յուսեֆը, երեկ քաղաքական ապաստան է ստացել ԱՄՆ-ում: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**



**Դատական նիստը տեղի է ունեցել Սան Դիեգոյում եւ տեւել է ընդամենը 15 րոպե: Ավելի վաղ Մոսաբ Յուսեֆի ԱՄՆ-ում մնալու դեմ հանդես էր եկել ազգային անվտանգության նախարարությունը: Սակայն դատական նիստի ընթացքում նախարարության ներկայացուցիչը հանել է իր առարկությունները:**

**2009-ի փետրվարին Մոսաբ Յուսեֆը մերժում էր ստացել. կառավարությունը գտել էր, որ նա ահաբեկչության վտանգ է ներկայացնում: Յուսեֆը ԱՄՆ-ում բնակվում է 2007-ից, վախենալով նախկին զինակիցների հետապնդումներից: 1997-ից համագործակցել է Իսրայելի ընդհանուր անվտանգության ծառայության հետ: Բացի դրանից, ընդունել է քրիստոնեություն: Նրա օգնությամբ Իսրայելի հատուկ ծառայություններին հաջողվել է ձերբակալել «Համասի» մի քանի բարձրաստիճան անդամների, ինչպես նաեւ կանխել մի շարք ահաբեկչություններ:**

# Իսլանդիայի վարչապետուհին ամուսնացել է իր ընկերուհու հետ

**Իսլանդիայի վարչապետուհի Յոհաննա Սիգուրդարդոտտիրը ամուսնացել է իր ընկերուհու` գրող եւ լրագրող Յոնինա Լեոսդոտտիրի հետ, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:**

**Միասեռական ամուսնության պաշտոնական ձեւակերպումը հնարավոր դարձավ այն բանից հետո, երբ**



**Իսլանդիայում ուժի մեջ մտավ համապատասխան օրենքը: Խորհրդարանում հունիսի 12-ին ընդունված օրենքը կիրարկվում է հունիսի 27-ից:**

**Քաղաքական գործչի եւ կին գրողի սիրավեպը ծայր է առել 2000-ականների սկզբներին: 2002-ից Սիգուրդարդոտտիրը եւ Լեոսդոտտիրը ապրում էին այսպես կոչված քաղաքացիական ամուսնության կարգավիճակով: «Դեյլի թելեգրաֆ» թերթի տվյալներով, Իսլանդիայի վարչապետը սեռական փոքրամասնությունների առաջին ներկայացուցչուհին է, որ գլխավորում է առանձին երկրի կառավարություն:**

**Անցյալում Սիգուրդարդոտտիրն ամուսնացած է եղել տղամարդու հետ: Առաջին ամուսնությունից ունի երկու չափահաս որդի: Վարչապետն ունի նաեւ խորթ որդի:**

1-ին էջից

# Գրողների համաժողովը նոր հեռանկարներ է բացում

Արա Աբրահամյանը ողջունելով համաժողովի մասնակիցներին մաղթեց բեղմնավոր աշխատանք ու նշեց. «Վերջին տարիներին տեղի են ունենում հայության ջանքերի միավորման գործընթացներ` ազգային կյանքի տարբեր ոլորտներում: Այդ գործընթացի ամենաակտիվ մասնակիցն է Հայաստանի գրողների միությունը, որը ներկա պայմաններում, լուրջ աշխատանք է կատարում հայ գրողների ջանքերի միավորման ուղղությամբ, նախաձեռնում հայրենիքի եւ սփյուռքի նորագույն գրականությունների փոխադարձ կապի եւ համազգային հոգեւոր մշակութային խնդիրների հետ առնչվող քննարկումներ: Այդ ամենը նպաստում են Հայաստան-Սփյուռք հարաբերությունների զարգացմանն ու հայ գրականության հարստացմանը:

Այս տեսանկյունից համազգային կարեւոր իրադարձությունների շարքին է դասվում գրողների համահայկական համագումարներ հրավիրելու Հայաստանի գրողների միության նախաձեռնությունը:

Համազգային կարեւոր իրադարձություն է նաեւ օտարագիր հայ գրողների համագումարների հրավիրումը, որը նպատակ է հետապնդում համախմբելու աշխարհասփյուռ հայերին, անկախ լեզվից եւ բնակության վայրից, մեր ժողովրդի զավակներին ոգեշնչել ազգային միաբանության գաղափարով, ազգային ինքնության նոր վերազարթոնքի միջոցով սերտացնել կապը Մայր հայրենիքի հետ:

Ակտիվ գործունեությամբ ազգային միաբանության առաքելությունն են հետապնդում նաեւ Համաշխարհային հայկական կոնգրեսը եւ Ռուսաստանի հայերի միությունը: Ահա թե ինչու ստեղծագործական, կառուցողական սերտ համագործակցություն է հաստատվել Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության եւ Հայաստանի գրողների միության միջեւ:

Այդ համագործակցության արդյունքում ծնվեց գրականության զարգացման համահայկական հիմնադրամը: Տարիներ անց մենք կատարեցինք հաջորդ քայլը` որդեգրելով այս ոլորտում նոր քաղաքականություն` բարեգործությունից անցում անելով մշակութային շարժում ծավալելու նախաձեռնության: ՀՀ սփյուռքի նախարարության, ստեղծագործական միությունների, հանրապետության Ազգային ակադեմիայի հետ համատեղ, գիտության, արվեստի եւ գրականության տարբեր ոլորտներում հայտարարեցինք մրցույթներ:



Այդ մրցույթները կրում են համահայկական բնույթ, որոնց լիարժեք իրավունքով կարող են մասնակցել նաեւ Սփյուռքի գիտական եւ ստեղծագործական մտավորականության ներկայացուցիչները, այդ թվում ներկա համաժողովին մասնակցող գրողները»: Այնուհետեւ պրն Աբրահամյանը համոզմունք հայտնեց, որ համագործակցությունը գրողների միության, մշակույթի ու սփյուռքի նախարարությունների հասարակական ու մշակութային այլ կազմակերպությունների հետ առավել կամրապնդեն, ձեռք կբերվեն նոր որակ, նոր իմաստ ու բովանդակություն: Նրա կարծիքով նոր մոտեցում պետք է ցուցաբերվի առաջին հերթին երիտասարդությանը առնչվող հարցերին: Երիտասարդներն այսօր դժվարությամբ են կողմնորոշվում ստեղծված իրողությունների պայմաններում ու առաջարկեց` Հայաստանի հզորացման, Հայաստան-Սփյուռք հարաբերությունների նոր իմաստավորման գործում երիտասարդության դերի ու տեղի խնդիրը դարձնել առաջիկա մրցանակաբաշխության թեման: «Կարծում եմ,- նշեց պրն Աբրահամյանը,- այդ մրցանակաբաշխությամբ, մենք մեզ համար կհայտարարենք երիտասարդության տարի, որն էլ կնպաստի երիտասարդ ստեղծագործողների ակտիվացմանը»:

Գրողների համահայկական 5-րդ համաժողովի մասնակիցներին կրկին մաղթում եմ արդյունավետ աշխատանք, համոզված լինելով, որ նրանց անմնացորդ նվիրումի շնորհիվ մոտ ապագայում նոր վերածնունդ կապրեն թե՛ հայ գրականությունը, թե՛ Հայաստանը»:

Այնուհետեւ Արա Աբրահամյանը 2009-ի «Հայը 21-րդ դարասկզբին» գրական մրցանակաբաշխության (արձակ) դափնեկիրներին (Անահիտ Թոփչյան, Հովհաննես Երանյան, Նորայր Ադալյան, Սուսաննա Հարությունյան, Սամվել Կոսյան) հանձնեց դիպլոմները: Այդ ամենից զատ ՌՀՄ հատուկ մրցանակին արժանացավ բանաստեղծուհի Նաթելլա Լալաբեկյանը: Դափնեկիր Հովհ. Երանյանը հատուկ շնորհակալություն հայտնեց Արա Աբրահամյանին մրցույթը կազմակերպելու համար ու ասաց. «Եթե չլիներ այս մրցանակաբաշխությունը, իմ վեպը երեւի տարիներով կմնար անավարտ...»:

Արա Աբրահամյանը վերջում եւս մեկ առաջարկ արեց, որ ամեն տարի գրողները հավաքվեն ոչ թե Երեւանում միայն, այլեւ այլ երկրներում բոլոր գրողներին հրավիրեց հաջորդ տարի Մոսկվայում ՌՀՄ եւ ՀՀԿ-ի կողմից կազմակերպվող համաժողովին ու առաջարկեց այն դարձնել ավանդական, որի շնորհիվ հնարավոր կլինի հայ գրականությունը տարածել աշխարհով մեկ ու այն ավելի հարստացնել: Իսկ համաժողովի անցկացման ժամկետն ու թեման թողեց գրողների ընտրությանը: Բացի այդ պրն Աբրահամյանը հատուկ նշեց. «Ես լինելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարի կամքի դեսպանը, մեկ շաբաթ առաջ այդ կազմակերպության Փարիզի տնօրենին արել եմ առաջարկություն, որպեսզի մեր հայ մշակույթի ներկայացուցիչներն ու գրողները Ֆրանսիայում անցկացնեն «Հայ մշակույթի օրեր: Մեր կազմակերպությունների աշխատանքը կայանում է նրանում, որ մենք մեր մշակույթը գրական գործերը տարածենք աշխարհով մեկ ու աշխարհին ցույց տանք թե ով է հայը եւ ինչ դարավոր պատմություն ու մշակույթ ունի»:

Լեւոն Անանյանը ՀՀ մշակույթի նախարարության սահմանած ոսկե մեդալները հանձնեց բանաստեղծուհի Սեդա Վերմիշեւային, Վարուժան Ոսկանյանին (Ռումինիա) եւ Նորեկ Գասպարյանին (Արցախ): ՀՀ սփյուռքի նախարարության պատվոգրին արժանացավ Վրաստանի գրողների պատվիրակության ղեկավար բանաստեղ Գեւորգ Սնխչյանը:

Կեսօրվա նիստից հետո գրողները այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր եւ իրենց հարգանքի տուրքը մատուցեցին մեր անմեղ զոհերի հիշատակին:

Ավելի ուշ գրողների պատվիրակությանը ընդունեց ու ողջունեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: Այսօր համաժողովը կավարտի իր աշխատանքները համատեղ հայտարարությամբ:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**
**Ծաղկաձոր-Երեւան**

ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐ

# Բեյրութի «Վահրամ Փափազյան» թատերախմբի հյուրախաղերը Հայաստանում

Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայ երիտասարդաց ընկերակցության Բեյրութի «Վահրամ Փափազյան» թատերախումբը կեսդարյա բեղուն բեմական ճանապարհ է անցել: Թատերախմբի մասին **«Ազգն»** իր ընթերցողներին տեղեկացրել է, երբ երկու տարի առաջ փափազյանցիներն իրենց աստանապետ Տրդատ Ավետիքյանի հետ Երեւանում Ջոն Պատրիկի «Տարօրինակ միսիս Սեւիջը» պիեսը ներկայացրին պրոֆեսոր Երվանդ Ղազանչյանի բեմականացմամբ: Անցել է երկու տարի, սակայն թատերասերների հիշողության մեջ դեռ արթուն են այն հրաշալի տպավորությունները, որ պարգեւեցին փափազյանցիները:



Եվ ահա, հյուրախություն թատերասերների, ՀՀ սփյուռքի նախարարության «Մեկ ազգ, մեկ մշակույթ» համահայկական ծրագրի շրջանակներում հուլիսի 3-10-ը թատերախումբը հրավիրվել է Հայաստան հյուրախաղերի: «Ազգը» փորձեց «Վահրամ Փափազյան» թատերախմբի հետ սերտ կապեր հաստատած եւ տասը տարի շարունակ այդ թատրոնում բեմադրություններ իրականացրած պրոֆեսոր Երվանդ Ղազանչյանից տեղեկանալ սփյուռքում գործող հնագույն թատերախմբերից մեկի հյուրախաղերի մասին: Ի դեպ, «Վահրամ Փափազյան» թատերախումբը համարվում է Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի քույր թատերախումբը եւ այդ գործում իրենց լուման ունեն Լեւոն Հախվերդյանն ու Ռոմեն Կոզմոյանը, որոնց առաջարկով 11 տարի առաջ Երվանդ Ղազանչյանը հրավիրվել է Բեյրութ` բեմադրության:

Պրն Ղազանչյանն իր գոհունակությունը հայտնեց փափազյանցիներից, որոնք ամեն ինչ անում են թատրոնը բարձր մակարդակի վրա պահելու եւ հրավիրված բեմադրիչի յուրաքանչյուր պահանջը կատարելու համար: «Բեյրութը մեր սփյուռքի մշակութային մայրաքաղաքն է, եւ մեծ հաճույք է պատճառում` թատերական ավանդույթները պահպանող եւ սերնդեսերունդ փոխանցող թատրոնի հետ աշխատելը»:

Հուլիսի 4-ին Հ. Պարոնյանի անվան թատրոնի հարկի տակ կներկայացվի Հ. Պարոնյանի «Շողոքորթը» երկու գործողությամբ կատակերգությունը, որը բեմադրել է Երվանդ Ղազանչյանը, նկարիչն է Գրիշա Սահակյանը: Այդ ներկայացումը հուլիսի 8-ին կներկայացվի նաեւ Արտաշատի Ամո Խարազյանի անվան պետ. թատրոնի շենքում, որի մասին դեռ ամիսներ առաջ, երբ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը պաշտոնական այցով հրավիրվել էր Լիբանան ու թատերախմբին հրավիրել է Հայաստան: Թատերախումբը Երեւանում նաեւ մի շարք հանդիպումներ կունենա, կայցելի Հայաստանի տեսարժան վայրեր:

Հինգ տասնամյակը բոլորած թատրոնի հյուրախաղերին հայ հանդիսատեսը սպասում է սրտատրոփ:

Ս. Ս.

# Րաֆֆու «Սամվել» վեպը` բուլղարերեն




Րաֆֆու «Սամվել» վեպը XIX դարի հայ գեղարվեստական արձակի փայլուն նմուշներից է` հավասարազոր եվրոպական հայտնի դասականների գրչին, ամենասիրված հայ վեպերից մեկը եւ, թերեւս, ամենից շատ ընթերցվածը: Եվ կարծիքը, որ եթե Րաֆֆին եվրոպական որեւէ երկրում ստեղծագործեր, նույնքան հռչակ կունենար, որքան իր ժամանակակից եվրոպացի շատ վիպասաններ, իհարկե, ճշմարիտ է: Լեզվական «պատնեշը» գրական երկի տարածման գլխավոր խնդիրն է, ուստի եւ առաջնային է թարգմանությունը: Երեկ **«Ազգի»** խմբագրության ստացած գիրքը Րաֆֆու «Սամվել» վեպի բուլղարերեն թարգմանությունն էր: Գիրքը լույս է տեսել 2010 թվականին Սոֆիայում (530 էջ, Ciela հրատ.): Թարգմանությունը կատարված է 1961 թվականի երեւանյան հրատարակությունից, բուլղարահայ գրող, թարգմանիչ Հակոբ Օրմանջյանի կողմից, նկարիչ եւ գեղարվեստական ձեւավորում` Ալեքսանդր Գրիգորյանի: Գիրքը լույս է տեսել Հայկական բարեգործական ընդհանուր միության 100-ամյակի առիթով եւ` աջակցությամբ:

Ս. Բ.

# Արդյոք ցուցադրվելու՞ է մաքուր նկարչություն

Այսօր «Հայ Արտ» մշակութային կենտրոնում բացվելու է ցուցահանդես` մասնակցությամբ 5 նկարիչների ու մի բանաստեղծի: Նկարիչներն են Վարդան Թովմասյանը, Կամո Նիգարյանը, Վահան Ռումելյանը, Գարիկ Կարապետյանն ու Համլետ Հովսեփյանը: Մասնակցում է նաեւ բանաստեղծ Վահան Վարդանյանը. ցուցահանդեսի ընթացքում նա կարդալու է իր բանաստեղծությունները:

«Մենք կարիք ունենք բարձր արվեստն ընկալող հասարակության», ցուցահանդեսի նախօրեին հրավիրված ասուլիսի ժամանակ, «Ուրբաթ» ակումբում, նշեց «Հայ Արտ» կենտրոնի տնօրեն **Ռիտա Շառոյանը**:

Առաջիկա ցուցահանդեսը, որը տեւելու է 2 շաբաթ, յուրահատուկ մի երկխոսություն է լինելու` արվեստագետի եւ արվեստասերի միջեւ:

Ասուլիսին ներկա էին մասնակից նկարիչներից 4-ը: Գարիկ Կարապետյանը նշեց, որ 20-րդ դարում նկարչությունն ազատագրվեց այն ֆունկցիաներից, որոնք խանգարում էին իրեն: «Այսօր մենք ներկայացնում ենք մաքուր նկարչություն, որն անցել է տարբեր հիասթափությունների միջով», ավելացրեց **Գ. Կարապետյանը**: Վերջինիս խոսքով` ճշմարիտ արվեստն իրականությունից առաջ է, «այդ արվեստը հասարակությանը ներկայացնելը շատ բարդ է»:

Բանախոսները խոսեցին նաեւ հասարակության ու բարձր արվեստի միջեւ խզված կապի մասին: Այս խնդրի լուծման գործում մեծ դեր պետք է ունենան արվեստաբանները:

«Ցավոք սրտի, հիմա արվեստաբան չունենք: Հայաստանն արվեստաբանության խնդիր ունի` կապված, հասկապես, ժամանակակից արվեստի հետ», ասաց **Վահան Ռումելյանը**: Նրա կարծիքով` արվեստաբանների գործն ավելի շատ կատարում են լրագրողները:

Ցուցահանդեսի համակարգող **Գայանե Եղիազարյանը** հակադարձեց նկարչի խոսքերին. «Ինքս արվեստաբան եմ, եւ արվեստաբանները մեծ աշխատանք են կատարում: Այսօր արվեստաբանությունը պետական հովանավորության կարիք ունի»: Գարիկ Կարապետյանն էլ փորձեց հաշտեցնել բանավիճող կողմերին. «Լավ արվեստաբաններ ունենք, բայց արվեստաբանություն չկա՛»:

Ի. Պ.

# Իրանահայ համայնքի ներկայացուցիչները դեմ են «Ռոստոմ» դպրոցի փակմանը

«Արաքս» շաբաթաթերթի փոխանցմամբ Թեհրանի հայոց ազգային «Ռոստոմ» աղջկական դպրոցի դահլիճում տեղի է ունեցել քննարկում: Դպրոցի աշակերտուհիների ծնողները բողոքել են Թեմական եւ Կրթական խորհուրդների հակականոնադրական եւ հակապատգամավորական ժողովի կիրառած գործունեության դեմ:

«ԹՀԹ Թեմական խորհուրդը` հաշվի չառնելով Պատգամավորական ժողովի հունիսի 1-ի նախապայմաններով որոշումը, որի ամենահիմնական եւ առաջին կետը ժողովրդի համաձայնության ձեռքբերումն էր, ինքնագլուխ ընթացքի մեջ է դրել «Սահակյան» ոչ շահադիտական դպրոցի տեղափոխման եւ «Ռոստոմ» աղջկական դպրոցի միատեղման աշխատանքները, ինչի հետեւանքով դպրոցի աշակերտների ծնողները միահամուռ իրենց բողոքի ձայնն են բարձրացրել Թեմական եւ Կրթական խորհուրդների դեմ», գրում է թերթը:

Դպրոցի աշակերտուհիների ծնողները Պատգամավորական Դիվանի ժողովին նամակ են գրել` նշելով, որ դեմ են «Ռոստոմ» դպրոցը «Արաքս» դպրոց փոխադրելուն եւ խնդրում են չտնտեսել դպրոցի աշակերտուհիների, ծնողների շահերն ու ցանկությունները: Բողոքնամակին կցված է նաեւ 73 ծնողի ստորագրություն: Մտահոգությունը, որ եթե դպրոցները միավորվեն` «Ռոստոմ» դպրոցի շենքը գուցե վաճառեն, արդարացված է, սակայն պետք է նաեւ հաշվի առնել, որ իրանահայ համայնքի թիվը վերջին տարիներին նվազել է եւ դպրոցների միավորումը դարձել է անհրաժեշտություն:

Հ. Հ.

AZG NEW PDF.qxd 01/07/2010 23:05 Page 1



# Նման խաղով դժվար էր հաջողություն ակնկալել




Երեկ մեկնարկած ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խաղարկությունում Հայաստանի թիմերից առաջինը մրցասպարեզ դուրս եկավ «Ուլիսը», որը նորամուտը նշեց եվրոպական գավաթների խաղարկությունում: «Հրազդան» մարզադաշտում ուլիսցիները հյուրընկալել էին իսրայելական «Բնեյ Եհուդային»: Որքան էլ որ ուլիսցիները ջանացին նորամուտը հաղթանակով նշելու համար, սակայն դա նրանց չհաջողվեց: Անկեղծ ասած, նման «անատամ» խաղով դժվար էր հաջողության հասնել: Թեեւ Իսրայելում մրցաշրջանը չի մեկնարկել եւ ակնհայտորեն զգացվում էր, որ «Բնեյ Եհուդայի» ֆուտբոլիստները դեռեւս լավ մարզավիճակում չեն, սակայն նույնիսկ այդ պարագայում հյուրերն ավելի ակտիվ խաղ ցուցադրեցին ու ավելի մոտ էին հաղթանակին: Խաղի կազմակերպմամբ, գոլային պահերի քանակով էլ հյուրերը գերազանցեցին ուլիսցիներին:

Խաղասկզբում «Ուլիսի» ակտիվությունը շատ կարճ տեւեց: Առաջին խաղակեսում հանդիսականները ակնհայտորեն ձանձրանում էին: Գործելով դանդաղ տեմպով, ուլիսցիները չէին կարողանում մտածված կոմբինացիաներ ձեռնարկել, որոնց շնորհիվ կներխուժեին մրցակցի տուգանային հրապարակ ու կսպառնային դարպասին: Հյուրերն էլ մեծ ուժեր կենտրոնացնելով թիկունքում, առանձնապես ակտիվություն չէին դրսեւորում առջեւի գծում: Բավական է նշել, որ առաջին վտանգավոր հարվածը հյուրերի դարպասին կատարվեց միայն 45-րդ րոպեին: Սակայն Շոթա Ջիքիայի հարվածը հետ մղեց դարպասապահը: Իսկ ահա հյուրերը 2 անգամ կարող էին գրավել դարպասը: Շալեի Մենաշի հարվածը հետ մղեց Վլադիմիր Մալկովը, իսկ Օզ Եզրան մոտ տարածությունից վրիպեց:

Ընդմիջումից հետո խաղադաշտում խաղը զգալիորեն աշխուժացավ: «Ուլիսը» հաշիվը բացելու լավ հնարավորություն ունեցավ 60-րդ րոպեին, սակայն Գեորգի Կրասովսկու գլխի հարվածից հետո պաշտպանը գնդակը հեռացրեց դատարկ դարպասից: Գոլային պահերը չիրացրին նաեւ Արտակ Գրիգորյանն ու Արտյոմ Ադամյանը: Հաղթանակ կարող էին կորզել նաեւ հյուրերը, որոնք եւս ձեռքից բաց թողեցին գոլային մի քանի հիանալի պահերը: Մասնավորապես, ավելացված ժամանակում հյուրերին կարող էր հաղթանակ պարգեւել Օմրի Աֆտկեն, սակայն մոտ տարածությունից գլխի հարվածով չկարողացավ գրավել դարպասը:

Այսպիսով, դարպասները մնացին անառիկ: Ինչ խոսք, այդ հաշիվն առաջին հերթին ձեռնտու է «Բնեյ Եհուդային», որը հուլիսի 8-ին ուլիսցիներին հյուրընկալելու է սեփական հարկի տակ: Եթե ուլիսցիները ցանկանում են հաղթահարել առաջին փուլի արգելքը, ապա պատասխան խաղում պետք է այլ որակի ու բովանդակության խաղ ցուցադրեն, աչքի ընկնեն ագրեսիվությամբ ու հարձակողական հստակ գործողություններով:

# Բլատերը ներողություն խնդրեց




**ՖԻՖԱ-ի նախագահ Յոզեֆ Բլատերը պաշտոնապես ներողություն է խնդրել Անգլիայի եւ Մեքսիկայի հավաքականներից, որոնք տուժել էին մրցավարական կոպիտ սխալների պատճառով: «Մենք ափսոսում ենք, որ մրցավարական սխալներն ակնհայտ են: Հարկավոր է քննարկել փոփոխություններ մտցնելու հնարավորությունը եւ առաջիկայում խուսափել նման իրավիճակներից», նշել է Բլատերը: Նա նաեւ պատասխանել է իր հասցեին հնչած քննադատությանը` կապված կրկնապատկերների օգտագործման արգելքի հետ:**

**«Նորագույն սարքավորումներից եւ ոչ մեկը հարմար չէ ֆուտբոլում կիրառելու համար: Կարծիք կա, որ կարելի է գնդակի վրա հատուկ չիպ տեղադրել, ինչը հնարավորություն կտա որոշելու դարպասի գրավման փաստը: Սակայն այդ դեպքում ողջ խաղադաշտը պետք է «կահավորել» հատուկ տվիչներով: Դա բարդ գործ է թե տեխնիկապես, թե նյութապես: Դարպասների մոտ տեսախցիկների տեղադրումը եւս լավագույն տարբերակը չէ: Եթե գնդակի շուրջը մի քանի ֆուտբոլիստներ գտնվեն, այդ դեպքում դժվար կլինի սարքավորումներով ֆիքսել անհրաժեշտ պահը: Եթե մեզ հաջողվի առանց բարդ տեխնոլոգիաների կիրառման հստակ արձանագրել դարպասի գրավումը, ապա դա օգուտ կտա ֆուտբոլին», հայտարարել է Յոզեֆ Բլատերը: Նա նաեւ տեղեկացրել է, որ կրկնապատկերների օգտագործման հարցը կքննարկվի հուլիսին Ուելսում կայանալիք ՖԻՖԱ-ի գործկոմի նիստում, իսկ մինչեւ նոյեմբեր մրցավարության որակի բարելավմանն ուղղված ծրագիր կմշակվի:**

**ՖԻՖԱ-ն պաշտոնապես արգելել է աշխարհի առաջնության հանդիպումների ժամանակ մարզադաշտերի ցուցատախտակներին վիճելի պահերի կրկնապատկերների ցուցադրումը: Այդ քայլին ՖԻՖԱ-ին դրդել էր այն, որ Արգենտինա-Մեքսիկա խաղի ժամանակ մարզադաշտում ցուցադրել էին «խաղից դուրս» վիճակից Կառլոս Տեւեսի խփած գոլի կրկնապատկերը, ինչը խաղադաշտում բորբոքել էր կրքերը:**

**Ֆուտբոլի արքա Պելեն առաջարկել է խաղի ժամանակ դարպասների հետեւում լրացուցիչ մրցավարների կանգնեցնել, որոնք հնարավորություն կունենան ֆիքսելու դարպասի գրավման պահը: Գուս Հիդինգն էլ նշել է, որ Յոզեֆ Բլատերը կամ պետք է թույլատրի նոր տեխնոլոգիաների կիրառումը ֆուտբոլում, կամ էլ հրաժարական տա:**

# Նիգերիայի նախագահը երկու տարով արգելել է հավաքականի գործունեությունը

Նիգերիայի նախագահ Ջոնաթան Գուդլակը զրկել է երկրի ֆուտբոլի ազգային հավաքականին առաջիկա 2 տարիներին միջազգային մրցումներին մասնակցելու իրավունքից: Պատճառն աշխարհի առաջնությունում նիգերիացիների չափազանց թույլ մրցելույթներն են: Լարս Լագերբեկի գլխավորությամբ նիգերիացիները 2 պարտություն կրեցին, մեկ խաղ ավարտեցին ոչ-ոքի եւ խմբում զբաղեցրին վերջին տեղը:

Այս տարվա փետրվարին հավաքականի նախկին գլխավոր մարզիչ Շաիբու Ամոդուն հեռացվել էր պաշտոնից, երբ նիգերիացիներն Աֆրիկայի գավաթի խաղարկությունում գրավել էին 3-րդ տեղը: Շվեդ մասնագետ Լագերբեկի հետ ֆեդերացիան 5 ամսով էր պայմանագիր կնքել: 61-ամյա մարզիչը հեռացել էր Շվեդիայի հավաքականի գլխավոր մարզչի պաշտոնից` չկարողանալով շվեդներին աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր պարգեւել:

Ինչպես հայտնի է, ՖԻՖԱ-ն երկրի իշխանություններին խստորեն արգելում է խառնվել ֆուտբոլի ֆեդերացիայի գործունեությանը: Նման դեպքերում, որպես կանոն, ՖԻՖԱ-ն այդ երկրի հավաքականներին զրկում է իր հովանու տակ անցկացվող մրցումների մասնակցությունից: Ինչպես երեւում է, Նիգերիայի նախագահը կամ ծանոթ չէ գործող կարգին, կամ էլ ցանկանում է, որ ՖԻՖԱ-ն իրոք պատժի հավաքականին:

ՇԱԽՄԱՏ

# Բաժանվեցին խաղաղությամբ

**Մեկօրյա հանգստից հետո Ջերմուկում ընթացող շախմատի Գրան պրիի խաղարկության մասնակիցները կրկին նստեցին խաղասեղանների շուրջն` անցկացնելով 7-րդ տուրի հանդիպումները: Ինչպես եւ սպասվում էր, Էլինա Դանիելյանի ու Լիլիթ Մկրտչյանի մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի: Հաշտություն կնքեցին նաեւ Պիա Կրամլինգն ու Անտոանետա Ստեֆանովան, Բաիրա Կովանովան ու Հոու Յիֆանը:**

**Նոր հաղթանակ տոնեց մրցաշարի առաջատար Նանա Ձագնիձեն` պարտության մատնելով Մայա Չիբուրդանիձեին: Տատյանա Կոսինցեւան հաղթեց Շեն Յանին, Մարթա Ֆիեռոն էլ առավելության հասավ Հու Յուհուայի նկատմամբ:**

**7 տուրից հետո 6,5 միավորով առաջատարը Նանա Ձագնիձեն է: 5-ական միավորով 2-3-րդ տեղերն են բաժանում Լիլիթ Մկրտչյանն ու Տատյանա Կոսինցեւան: Էլինա Դանիելյանը 3,5 միավորով 6-րդ տեղում է:**

**Այսօր կայանալիք 8-րդ տուրում մեծ հետաքրքրություն է ներկայացնում Լիլիթ Մկրտչյանի եւ Նանա Ձագնիձեի մրցավեճը: Դանիելյանը սպիտակներով կխաղա Կրամլինգի հետ:**

# Տիտղոսի պաշտպանությունը` հուլիսի 16-ին

**Առաջին թեթեւ քաշային կարգում Եվրոպայի չեմպիոն Լյովա Կիրակոսյանն իր տիտղոսի հերթական պաշտպանությունը կիրականացնի հուլիսի 16-ին: Ֆրանսիական Թուլոն քաղաքում նա կմրցի իսպանացի Ֆրանսիսկո Նոհալեսի հետ:**

**36-ամյա Կիրակոսյանը ծնունդով Գյումրիից է, ներկայումս բնակվում է Ֆրանսիայում: Պրոֆեսիոնալ ռինգում նա անցկացրել է 37 մենամարտ, որից 32-ում հաղթել է, 5-ում պարտվել: Եվրոպայի չեմպիոնի տիտղոսը հայ բռնցքամարտիկը նվաճել էր այս տարվա փետրվարի 19-ին` հաղթելով անգլիացի Սկոտ Լոտոնին:**

**Նոհալեսը 34 տարեկան է: Պրոֆեսիոնալ ռինգում անցկացրել է 35 մենամարտ, որից 19-ում հաղթել է, 5-ն ավարտել է ոչ-ոքի, 11-ում պարտվել է:**

# Ֆեդերերը վայր դրեց չեմպիոնի լիազորությունները



**Շվեյցարացի թենիսիստ Ռոջեր Ֆեդերերը վայր դրեց Ուիմբլդոնի չեմպիոնի լիազորությունները: Քառորդ եզրափակիչում նա զիջեց չեխ Թոմաշ Բերդիխին (4-6, 6-3, 1-6, 4-6):**

**«Չեմ կարծում, թե այդքան վատ խաղացի: Պարզապես Բերդիխը կարողացավ հաղթել: Նրա հետ 10 անգամ հանդիպել եմ: Այսօր նա հավաքված էր խաղում: Չկարողացա դրսեւորել բոլոր ունակություններս: Այնպես որ խիստ հիասթափված եմ: Ընդհանրապես վերջին շրջանում խաղս չի ստացվում: Բացի այդ որոշ խնդիրներ կան վնասվածքի պատճառով», հանդիպումից հետո հայտարարել է Ֆեդերերը:**

**Կիսաեզրափակիչում Բերդիխը կհանդիպի սերբ Նովակ Ջոկովիչի հետ: Վերջինս պարտության մատնեց թայվանցի Լու Են Սունին (6-3, 6-2, 6-2): Մյուս զույգը կազմել են բրիտանացի Էնդի Մարեյն ու իսպանացի Ռաֆայել Նադալը: Մարեյն առավելության հասավ ֆրանսիացի Ժո-Վիլֆրիդ Տսոնգայի նկատմամբ, Նադալը հաղթեց շվեդ Ռոբին Սոդեռլինգին:**

# Կապելոն մտադիր չէ հեռանալ

**Անգլիայի հավաքականի գլխավոր մարզիչ Ֆաբիո Կապելոն հայտարարել է, որ չի պատրաստվում հրաժարական տալ: Նա դեռ 2 տարվա պայմանագիր ունի հավաքականի հետ: Կապելոն նախնական խոսակցություն է ունեցել Անգլիայի ֆուտբոլի ֆեդերացիայի ներկայացուցիչների հետ, որոնք 2 շաբաթ ժամանակ են վերցրել վերջնական վճիռ կայացնելու համար:**

**«Ես ցանկանում եմ շարունակել աշխատանքս Անգլիայի հավաքականում: Ակումբներից մի շարք առաջարկներ ունեի, սակայն մերժեցի: Իհարկե, հիասթափված եմ հավաքականի ելույթներից, որը չարդարացրեց ֆուտբոլասերների սպասելիքները: Մեզ չհաջողվեց կատարել խնդիրը` մտնել եզրափակիչ», նշել է Կապելոն:**

**Կապելոյի տարեկան աշխատավարձը 6 մլն ֆունտ ստեռլինգ է: Եթե Անգլիայի ֆուտբոլի ֆեդերացիան ժամկետից շուտ խզի պայմանագիրը, ապա ստիպված կլինի Կապելոյին 12 մլն ֆունտ ստեռլինգ փոխհատուցում վճարել:**

# Կլիչկոն կրկին մարտահրավեր է նետել Վալուեւին

**Գերծանր քաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Վիտալի Կլիչկոն կրկին մարտահրավեր է նետել Նիկոլայ Վալուեւին` եւս մեկ անգամ նրան հնարավորություն ընձեռելով պայքարելու աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար: Նա նաեւ նշել է, որ հնարավորություն է տալիս Վալուեւին այնպիսի գումար վաստակել, որը մինչ այդ ոչ մի բռնցքամարտիկ նրան չէր առաջարկել:**

**Սակայն Վալուեւի ներկայացուցիչներն առայժմ չեն շտապում համաձայնության գալ: Կլիչկոն հայտարարել է, որ այդ դեպքում ինքը կրկին այլ մրցակից կընտրի: Մինչ այդ էլ, Վալուեւը հրաժարվել էր Կլիչկոյի հետ մենամարտելուց եւ ուկրաինացի բռնցքամարտիկը պայմանագիր էր կնքել լեհ Ալբերտ Սոսնովսկու հետ, որին ի դեպ հաղթեց նոկաուտով:**

**Ինչպես հայտնի է, Վալուեւի մենամարտերի կազմակերպմամբ զբաղվում է հանրահայտ պրոմոութեր Դոն Քինգը: Վերջինս հայտարարել է, որ K2 պրոմոութերական ընկերությունը Վալուեւին մենամարտի համար 2,5 մլն դոլար է խոստացել եւ իրենք ընդունում են մարտահրավերը, եթե խոստումը կատարվի:**

**Այս հայտարարությանն անմիջապես արձագանքել է Կլիչկոյի ներկայացուցիչ Բեռնդ Բյոնտեն. «Դա 8 ամիս առաջ էր, երբ խոսք էր գնում մենամարտը մարզադաշտում կազմակերպելու մասին: Մենք Վալուեւին առաջարկել ենք 1,5 մլն դոլար: Այս գումարն էլ ավելին է, քան Վալուեւը կարող է ստանալ ցանկացած այլ մենամարտում: Վերջին մենամարտում նա բոլոր առումներով զիջեց Դեւիդ Հեյին: Հոլիֆիլդի հետ մենամարտում էլ նա պարտվել էր, սակայն մրցավարները հաղթանակը նրան շնորհեցին: Այս ամենը Քինգին բնորոշ խաղեր են: Վալուեւը երկու տարբերակ ունի: Նա կամ պետք է մենամարտի Կլիչկոյի հետ, կամ էլ ձգտի ռեւանշ մենամարտ անցկացնել Հեյի հետ: Մենք նրան 1,5 մլն դոլարից ավելին չենք առաջարկի»:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 01/07/2010 23:04 Page 1



# 44 մլն դոլար Հայաստանին եւ 10 մլն` Արցախին

ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հատկացումների ենթահանձնաժողովի որոշմամբ, 2011թ. ֆինանսական տարում Հայաստանը Միացյալ Նահանգներից ստանալու է 44 միլիոն դոլարի ուղղակի օգնություն, եւս 10 միլիոն դոլար ամերիկյան բյուջեից հատկացվելու է Լեռնային Ղարաբաղին:

Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի տարածած հաղորդագրության համաձայն, կայացված այս որոշմամբ ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հատկացումների ենթահանձնաժողովը նախորդ տարվա համեմատությամբ 4 մլն դոլարով պակասեցրել է Հայաստանին հատկացվող օգնությունը, չնայած որոշված գումարը 4 մլն դոլարով ավելին է, քան առաջարկել էր ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Կոնգրեսին ներկայացված բյուջեի նախագծով:

Սպիտակ տունը առաջարկել էր 40 միլիոն դոլարի օգնություն ցուցաբերել Հայաստանին: Բայց ենթահանձնաժողովի անդամները, ըստ ԱՀԴՀ-ի հաղորդագրության, որոշեցին Հայաստանին հատկացվող ֆինանսական օգնության ծավալն ավելացնել գրեթե 10 տոկոսով: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, ապա ընթացիկ ֆինանսական տարվա համեմատ` Ստեփանակերտին հատկացվող ամերիկյան ուղղակի օգնության ծավալն աճելու է մոտ 25 տոկոսով:

ԱՀԴՀ տեղեկացմամբ, ԱՄՆ Կոնգրեսի ենթահանձնաժողովի անդամները քննարկումների ընթացքում անդրադարձել են նաեւ հունիսի 18-19-ին ղարաբաղյան շփման գծում տեղի ունեցած զինված միջադեպին: Հաղորդագրության համաձայն, կոնգրեսականներ Ֆրանկ Փալոնի եւ Մարկ Քըրքի անունից կոչ է արվում Միացյալ Նահանգներին` դադարեցնել ռազմական աջակցությունը Ադրբեջանին` ի պատասխան ադրբեջանական ռազմատենչ հռետորիկայի եւ հունիսի 18-ին Լեռնային Ղարաբաղի վրա տեղի ունեցած ադրբեջանական հարձակման, ինչը բերեց 5 զինվորների մահվան:

Հասկանալի է, որ ենթահանձնաժողովն իր որոշմամբ մերժել է նախագահ Օբամայի` ռազմական աջակցության հավասարակշռությունը Ադրբեջանի կողմը թեքելու փորձերը: Ենթահանձնաժողովը, հակառակը, ընտրել է Հայաստանին եւ Ադրբեջանին ռազմական ոլորտում ամերիկյան օգնության ծավալները հավասար մակարդակի վրա պահելու մոտեցումը: Ենթահանձնաժողովի որոշմամբ, Հայաստանին ու Ադրբեջանին 3.5-ական միլիոն դոլար կհատկացվի արտաքին ռազմական ֆինանսավորման նպատակով եւ 450-հազարական դոլար` Միջազգային ռազմական կրթության եւ դասընթացների անցկացման համար:

«Մենք գնահատում ենք ենթահանձնաժողովի նախագահ Լոուիի եւ Ադամ Շիֆի, Մարկ Քըրքի, Սթիվ Ռոդմանի եւ ենթահանձնաժողովի մյուս անդամների դերակատարությունը մեր համայնքի արտաքին աջակցության առաջնահերթությունները կառուցողական մոտեցմամբ լուծելու հարցում», ասել է ԱՀԴՀ գործադիր տնօրեն **Արամ Համբարյանը**: Նրա խոսքերով, ԱՀԴՀ-ն ակտիվորեն կաշխատի Սենատի իր գործընկերների հետ Ադրբեջանին աջակցություն չտրամադրելու մոտեցման, Լեռնային Ղարաբաղին խաղաղության գործընթացին ուղղակի մասնակցելուն վերադարձնելու, ԱՄՆ-Լեռնային Ղարաբաղ երկխոսության խոչընդոտների հաղթահարման եւ Հայաստանին տրամադրվող օգնության մեծացման ուղղությամբ:

Կոնգրեսական Ադամ Շիֆի ներկայացմամբ, ենթահանձնաժողովի զեկույցում Ադրբեջանին կոչ է արվել դադարեցնել սպառնալիքներն ու սադրանքները, քանի որ ռազմատենչ հայտարարություններն ու սադրիչ գործողություններն են տարածաշրջանում անկայունության ու բռնությունների պատճառը:

Ենթահանձնաժողովը կրկին հիշատակել է Ադրբեջանին Ազատության աջակցության բանաձեւի 907-րդ ուղղումը: Ըստ այդմ, մի կողմից, կոչ է արվում ամբողջությամբ վերականգնել Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին շրջափակման մեջ պահելու համար Ադրբեջանին օգնություն տրամադրելու հարցում արգելքները, որ ներկայացված են 907 կետում: Մյուս կողմից, ադրբեջանամետ կոնգրեսականների նամակով, առաջարկվում է վերացնել 907 դրույթը:

90-ականների սկզբին ընդունված այս լրացման համաձայն, Ադրբեջանին ամերիկյան ուղղակի օգնության հատկացման համար պայման էր սահմանվել վերացնել Հայաստանի շրջափակումը: Սակայն 2002 թվականին Կոնգրեսը Միացյալ Նահանգների նախագահին հնարավորություն ընձեռեց սառեցնելու 907-րդ ուղղման կիրառումը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊՈԼԻՍ

# «Պետք է ընտրել պատրիարքի տեղապահ, այլ ոչ թե աթոռակից պատրիարք»

## Եզրակացնում է թուրքական կառավարությունը

Շուրջ վեց ամիս առաջ Կ. Պոլսո հայոց պատրիարքարանի հոգեւոր խորհուրդը, նկատի առնելով Մեսրոպ Բ Մութաֆյանի անբուժելի հիվանդությունը, պատրիարքական ընտրությունների թույլտվության դիմում էր ներկայացրել Ստամբուլի նահանգապետարան, որ փոխանցի ներքին գործերի նախարարություն: Ի դեպ, Թուրքիայում նահանգապետին հենց այդ նախարարությունն է նշանակում, ուստի նահանգապետարանը ենթակա է նախարարությանը:

Հոգեւոր խորհրդի օրինակին առանձին դիմումով հետեւել է պատրիարքական ընտրությունների նախաձեռնող հանձնաժողովը: Քանի որ խորհուրդը պահանջում էր «աթոռակից պատրիարքի» ընտրության թույլտվություն, իսկ հանձնաժողովը առարկում` թե «նորընտիր պատրիարքը չպետք է աթոռակից լինի», ուստի ընտրությունները կանգնեցին փակուղու առջեւ: Ստեղծված իրավիճակում պատրիարքարանը ներկայացնող հոգեւոր խորհրդի եւ համայնքի ներկայացուցիչ նախաձեռնող հանձնաժողովի բանավեճերին միջամտեց թուրքական կառավարությունը, հանգելով հետեւյալ եզրակացության. «Պետք է ընտրել պատրիարքի տեղապահ»:

Այդ մասին հունիսի 29-ի համարում տեղեկացնում է «Հյուրիեթը»: Ահա թե ինչ է գրում. «Կառավարությունը միջազգային իրավունքի, աստվածաբանության եւ ազգային փոքրամասնությունների իրավունքների տեսանկյունից գնահատելով զույգ դիմումները, որոնք ներքին գործերի նախարարություն հասան Ստամբուլի նահանգապետարանի միջոցով, հանգեց հետեւյալ եզրակացության. «Քանի դեռ ողջ է ընտրված պատրիարքը եւ ինքնակամ չի հրաժարվել լիազորություններից, ճիշտ չի լինի աթոռակից կամ նոր պատրիարք ընտրելը: Դա կարող է որոշակի խնդիրներ առաջացնել ներկայացուցչության առումով»: Երեկ պատրիարքարան ուղարկված որոշման տեքստում ընդգծվում է, որ Մեսրոպ Բ-ն ցմահ պետք է մնա զբաղեցրած պաշտոնում, քանզի պատրիարքի տիտղոսը կարող է կրել միայն մեկ անձ, ուստի նպատակահարմար է նոր կամ աթոռակից պատրիարքի փոխարեն տեղապահի ընտրությունը»:

Հ. Չ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Արմենական-Ռամկավար Ազատական կուսակցության **«Զապել Եսայան»** կանանց ակումբը անցկացնում է բարեգործական ակցիա` Հայաստանի սահմանամերձ գյուղերի մանկապարտեզներին աջակցության նպատակով **«Խաղալիքներ երեխաներին» ծրագիրը:**

Ծրագրին միանալու առաջարկով դիմում ենք բոլոր շահագրգիռ կազմակերպություններին եւ անհատներին:

Ցանկացողները դիմեն Արմենական-ՌԱԿ գրասենյակ` Կորյունի 19-ա, հեռ.` 56-68-45:

# «ԱՄՆ-ի «անփառունակ» հայտարարությունը»

**«Ազգը»** նախորդ համարում անդրադարձել էր ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի Հայաստան այցելության նախօրեին պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի գծով պատասխանատու տեղակալ Ֆիլիպ Գորդոնի ճեպազրույցին: Հունիսի 30-ին այդ ճեպազրույցը տեղ է գտել նաեւ «Բուգյուն» թերթի կայքէջում: «ԱՄՆ-ի «անփառունակ» հայտարարությունը» վերնագրով թուրքական թերթը նախ հիշեցնում է, որ անցյալ շաբաթ Գորդոնն անձամբ պետքարտուղարություն էր հրավիրել Ասոշիեյթեդ պրես գործակալության թղթակցին, հարցազրույց էր տվել, որտեղ ասել էր. «Թուրքիան պետք է ապացուցի Արեւմուտքին իր հավատարմությունը», թերեւս դրանով էլ հակազդեցություն էր առաջ բերել Անկարայում»:

Այնուհետեւ «Բուգյունը» շարունակում է. «Ճեպազրույցում Գորդոնն ասաց, որ պետքարտուղարի Հայաստան այցելությունը պատեհ առիթ է քննարկելու Հայաստան-Թուրքիա հարաբերությունների նորմալացման գործընթացը, որը խցանվել է արձանագրությունների վավերացման փուլում: Նա մեկ անգամ եւս հիշեցրեց նորմալացման գործընթացին ԱՄՆ-ի ցուցաբերած աջակցության մասին եւ նշեց. «Մ. Նահանգները համոզված է, որ արձանագրությունների վավերացումն ու երկու երկրների միջեւ սահմանի բացումը բխում են կողմերի եւ ողջ տարածաշրջանի շահերից: Երբ թուրքական կողմը պատրաստ կլինի առաջընթաց քայլ կատարելու արձանագրությունների հարցում, Հայաստանը կարձագանքի դրան»:

Գորդոնը միաժամանակ նշեց, որ տասնամյակներ շարունակ տարածաշրջանում թերեւս ամենադրական զարգացումը Իսրայելի հետ Թուրքիայի սերտ հարաբերություններն էին, սակայն «Մավի Մարմարա» նավի վրա կատարված հարձակումով սրվեց դրանց լարվածությունը: Ապա նա ավելացրեց. «Այն քայլերը, որոնք չեն նպաստում երկու երկրների միջեւ դիվանագիտական եւ տնտեսական հարաբերությունների զարգացմանն ու չեն ամրապնդում անվտանգությունը, անփառունակ քայլեր են»: Տեղեկության համար օգտագործել ենք «Ջիհան» գործակալության հաղորդագրությունը»:

Հ. Չ.

# 3,5 մլրդ դրամ` փլուզված ճանապարհների նորոգման համար

Կառավարության որոշմամբ երեկ պահուստային ֆոնդից 3,5 մլրդ դրամ է հատկացվել տրանսպորտի եւ կապի նախարարությանը` Հայաստանի տարբեր մարզերում բնածին եւ տարերային աղետների հետեւանքով փլուզված ճանապարհահատվածների հիմնանորոգման համար: Հիշեցնենք, որ այս խնդրի վերաբերյալ նախօրեին իր մամուլի ասուլիսում անդրադարձել էր նաեւ տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը, իսկ երեկ վարչապետ **Տիգրան Սարգսյանը** նշեց, որ հորդառատ տեղումներն աննախադեպ իրավիճակ են ստեղծել ճանապարհների այս հատվածում, եւ կարեւորեց ամառային բարենպաստ եղանակն արդյունավետ օգտագործելն ու տարերքի հետեւանքները հնարավորինս շուտ վերացնելը:

Ա. Մ.

# Երուսաղեմի Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցու բակում հյուրանոց է կառուցվում

Երուսաղեմից ստացված լուրերի համաձայն` Երուսաղեմի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից տարածքում կարող է հյուրանոցային համալիր կառուցվել, քանի որ հրեական մի շինարարական կազմակերպություն մտադիր է վարձակալել եւ շինարարություն ծավալել այնտեղ: Երուսաղեմի քաղաքապետարանն առանց հայկական կողմի համաձայնությունն առնելու որոշել է տարածքը տրամադրել այդ շինարարական կազմակերպությանը: Տեղի հայերը բողոքում են այդ որոշման դեմ, իսկ հայկական կազմակերպությունները, այդ թվում` Երուսաղեմի Հայոց պատրիարքարանը, բողոքի նամակներ են հղել Երուսաղեմի քաղաքապետարան` նշելով, որ տվյալ շինարարական կազմակերպությունը տարբեր զարտուղի ճանապարհներով է հասել վարձակալության թույլտվությանը: Հայ համայնքի կազմակերպած ցույցի մասին պատմել է Իսրայելի հեռուստատեսությունը, նշվել է, որ հայերը ստորագրահավաք են սկսել հյուրանոցային համալիրի կառուցման եւ առհասարակ քաղաքապետարանի կայացրած որոշման դեմ:

Մ. Խ.




www. azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ` 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող` «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը` 02 Ա N 047261, տրուած` 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ` 3000, ստորագրուած է տպագրութեան` 01.07.2010, գինը` 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում` Իսահակեան 28: